

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏԹ.

Յ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Չ ԳՈՒՄ-ԳԱՐՈՆ, Պատրիարքարանի փողոց Գ

ԴԻԻԱՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Սէրվիլէն էֆէնտի	Ա. Արեւադէր
Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Բ. »
Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան	Գ. »
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան	Ա. Արեւադէր
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան	Բ. »
Միհրան էֆէնտի Չօպանեան	Գ. »

Չեռնասուրբեան դիւան

Յ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան
Հովհաննէս Բահանայ Մկրեան
Պապի էֆէնտի Պապօեան

Դաստիակութեան դիւան

Յարութիւն էֆէնտի Թիւլեան
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Տորթոս Ռափաէլեան էֆէնտի

Կարուածոց դիւան

Աւետիս էֆէնտի Կիրտաղեան
Քարսեղ էֆէնտի Հարաճեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան

Համարակալութեան դիւան

Յակոբ էֆէնտի Արշակ
Պօղոս էֆէնտի Թորգոմեան

Յարաբերութեան դիւան

Գարեգին էֆէնտի Մէլիքեան
Միհրան էֆէնտի Չօպանեան
Նշան էֆէնտի Օտեան

Իրաւասուրբեան դիւան

Տ. Ներսէս վարդապետ Ասլանեան
Տեղեմար էֆէնտի Էքսէրճեան
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօզեան

Նախանձեռնութեան դիւան

Տիգրան էֆէնտի Եուսուֆեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆ. Խմբիւճեան
Մկրտիչ էֆէնտի Մէլիքեան
Աբրահամ էֆէնտի Մուրատեան

ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՔԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Թ.

3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880

ՆԱՍՈՒԳԱՀ. — Տ. Պօղոս վարդապետ Խօշտամեան (Առժամեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եուսուֆեան (» »)

ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆՔ

ՆԵՒՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆՔ	ԵՐԵՍՓՈՒՆՔ (Ա. Վ. իճակ)	47 Յ. Շիշմանեան Տօրթօր Բ 9
Ա. Վ. իճակ	Գումագբու, Կեոխի վաշա Եւ. Գումագբուի դուրս	48 Իսկիւտար Ս. Կարապետ
4 Կարապետ Եպ. Սերոբեան Բ	21 Գրիգոր Պէրպէրեան Բ 9	49 Միհրան Պահճէղափուլին Բ
2 Սիմօն Եպ. Սէֆէրեան Բ	22 Գէորգ Ստիմարաճեան Բ 2	50 Պօղոս Թորգոմեան Բ
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ	23 Խաչիկ Մանկասարեան Բ 9	51 Նիկողոս Ալաճաճեան Բ
4 Կարապետ Ք. Սէթեան	24 Կարապետ Աղարդաճեան Բ	52 Տրդատ Փափաղեան Բ
Բ. Վ. իճակ	25 Համբարձում Մազպուլեան Բ 3	(Գ. Վ. իճակ)
5 Մատթէոս Եպ. Իզմիրլեան Բ	26 Մինաս Գափաճեան	Գասրմ բաշա
6 Պօղոս Վ. Խօշտամեան Բ	27 Ն. Մէղզուրեան Տօրթօր Բ 2	53 Գաստար Չէրազ Բ
7 Յովհաննէս Ք. Մկրեան Բ	28 Սարգիս Աղարէկեան Բ 9	Բէրա
8 Գրիգոր » Աճէմեան	29 Սահակ Ապրօ Բ 9	54 Աբիկ Ունճեան Բ 9
Գ. Վ. իճակ	30 Սենեքերիմ Մանուկեան Բ 8	55 Գրիգոր Սէլիմիճեան Բ
9 Յակոբ » Ա. Փափաղեան Բ 4	31 Բարթող Քիւրքճիպաշեան Բ	56 Գրիգոր Օտեան Բ 9
10 Ահալ Ք. Տ. Սարգսեան Բ 9	32 տովմ Տէրոյէնց Բ 9	57 Սէրվիլէն
11 Խորէն » Փէլիպեանեան Բ 9	33 Գէորգ Ազատուլաճեան Բ 9	58 Ռափայէլեան Տօրթօր Բ 9
12	34 Յ. Մէրեւէմ-Գուլի Բ 9	59 Միքայէլ Մօմճեան Բ 9
Գ. Վ. իճակ	35 Էտիս Կիրտաղեան Բ 9	60 Կարապետ Քազաղեան Բ 9
43 Ներսէս Վ. Ասլանեան Բ 9	36	61
44 Սուքիաս Ք. Ստեփանեան Բ 7	37	62
45 Վ. Քիմանէս » Պաշեան Բ 9	(Բ. Վ. իճակ)	Միջագիւղ
46	Պէշիկբաշ	63 Յակոբ Նորատուճեան Բ
Ե. Վ. իճակ	38 Նղրանիկ Կրճիկեան Բ 5	64 Տիգրան Եուսուֆեան
47 Խորէն Արք. Նար Պէշ Բ 9	39 Ալիքսան Խօրասանճեան Բ 9	65 Մկրտիչ Գազանճեան Բ
48 Յովհաննէս Վ. Փափաղեան Բ 9	40 Բարսեղ Հալաճեան	66 Նշան Օտեան Բ 3
49 Գարեգին » Թաթարեան	Եկեղիզբուր	67
20	41 Մկրտիչ Քիւրքճիպաշեան Բ	Պէշգօզ Եւ. Ղարաբիա
Բ Բացակայութիւն առաջին	42 Սեպուհ Մազսուտեան Բ 9	68 Միքայէլ Մամիկոնեան Բ 2
Բ 2 Բացակայութիւն երկրորդ	43 Մարուգէ Յրէնիկեան	(Գ. Վ. իճակ)
Բ 9 Բացակայութիւն երրորդ	44 Պօղոս Էքսէրճեան	Քուզիուցմուգ Եւ. Իսախիէ
	Իսկիւտար Ս. Խաչ	69 Յովհաննէս Կասեան Բ 9
	45 Սիմօն Ֆէլէկեան	70 Ստեփան Պէլիկեան Բ
	46 Ստեփան Ասլանեան	

Գատրգլուդ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահպաղեան Բ 5		421 Ստեփան փափաղեան
72 Մկրտիչ Մուրատեան Բ 8	Կարին	Տիվրիկ
Նարլըգարու.	101 Սիմոն Մազուտեան Բ 2	422 Նշան Գարազաշ
73 Յակոբ Եջմէնիճեան Բ 2	Քեօրանեա	Զէյրուց Է. Մարաշ
Եկեղիմանայի Սամարիոյ	102 Մ. փափաղեան Տօքթօր Բ 9	423
74 Պօղոս Մկրտիչեան Բ 9	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգալիու.	103 Վիչէն Ապտուլաճ Բ 2	424 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 9
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկոմիդիա	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս. Աստուածածին	104 Կարապետ Ս. Իւթիւճեան Ակն	425 Մելքօն Իսկէնտէրեան Բ 9
76 Գարեգին Յ. Մէլիքեան	105 Աւետիս Պարոնեան Բ	Տիգրանակերտ
Գուրուբէշմէ	Դարանիսար	426 Միհրան Զօղանեան Վան
77 Աստուածածին Իկրտապաշեան Բ	406 Արաբկիր	427
Հիսար Է. Պօլաճի ցիւղ	107 Կարապետ Խաչիկեան Բաղէշ	Ադրամար
78 Յովհաննէս Արշակունի Բ 9	408 Պրուսա	428 Հայեպ Է. Այնրապ
Նոր ցիւղ Է. Սրբեկիա	109 Քրիստոստուր Դաղարոսեան	429 Սեբաստիա
79 Դաղար Հովուեան Բ	110 Եղոկիա	430 Մկրտիչ Յ. Մէլիքեան Բուսճուգ
Պալատ	111 Ամասիա	431
80 Յովհաննէս Կրճիկեան Բ 6	112 Համբարձում Ալաճաճեան Բայու.	Կարս
81 Տեղեմաք Էջսէրճեան 82	113 Յովհաննէս Ազնաւորեան Բ 7	432 Արրահամ Յ. Այվազեան Զմշկաձագ
Քարակեօմրիակ	Եղեսիա	433 Համբարձում Սարըբէշիչեան Բ Գաղատիա
83 Սեպուհ Թիւրապեան Բ	114 Յակոբ Իւթիւճեան Մանճրլիս	434 Ատանա
84 (Ե. Վիճակ)	115 Հաճըն	435 Սղերդ
Սամարիա	Երզնկա	436 Մատթէոս Ալէքսանեան Բ 9 Եօզղատ
85 Այլքսան Պէշիքեան Բ	116 Ռէթէոս Պէրպէրեան Թէրիքտաղ	437 Լօղօֆէթ Պալեօղեան Մալաքիա
86 Եղիազար Մէլիքեան	117 Տիգրան Գ. Սինանեան Բ Կեսարիա	438 Գէորգ Վարդանեան Իզմիր
87 Մինաս ձաֆճաֆեան Բ	118 Գէորգ Գըլճճեան Խարբէրդ	439 Պապի Պապօեան Եզիպտոս
88 Նազարէթ Շահպաղեան	119 Պալքրէսէր	440 Արրահամ Մուրատեան
89 Յարութիւն Թիւլեան Բ		
90 Յակոբ Արշակ Բ		
91 Սեպուհ Թիւրապեան Բ 7		
92		
93		
94 Խասգիւղ		
95 Առաքել Ալթուն Տիւրքի		
96 Ռէթէոս Պէշիկճեան		
97 Սարգիս Արրահամեան Բ 9		
98		
99 Սարգիս Քալուքճեան Բ 9		
400 Աթանազիոս Արապեան Բ 9		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Ուղերձ ՚ի պատասխանի Նախագահական գրոյն. — Մրադիր Յանձնախումբին (Դռնիակ) :
- Բ. Հրատարում անդամոց Մայր Դիւանի և ընտրութիւն (Դռնբաց) :
- Գ. Խնդիր տեղափոխութեան և բացակայութեան երեսփոխանաց. — Տեղեկագիր Յանձնախումբին (Դռնբաց) :

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն անձնական տկարութեան, եւ ծողովին երկրորդ Ատենապեան. Յ. Մէրեւմ-Գուլի էֆէնտի ուղեւորութեան պատճառաւ բացակայ գտնուելով՝ ընդ առժամեայ Նախագահութեամբ Տ. Պօղոս վարդապետի Խօյտամեան, եւ Ատենապետութեամբ Եուսուֆեան Տիգրան էֆէնտի՝ Ատենաք բացուեցաւ ժամ 8 1/2 անցած, ի ներկայութեան 36 երեսփոխանաց, որոց թիւն 38 ի յանդեցաւ ի վերջէ :

սակայն լրագիրներն հետեւեալ օրն հրատարակեցին, ինչ գործողութիւն եւ որոշում տեղի ունեցաւ : Ստոյգ է որ մենք թագուն սաղնիւ բան մը չունինք, բայց երբէք դռնիակ նիստը նշանակութիւն չունի, քանի որ արդիւնքն կը հրատարակուի այսպէս. ուստի ես կառաջարկեմ կամ դռնիակ բառը բառնալ, կամ որոշումներն չհրատարակել :

ԳԱՓԱՄԱՃՅԱՆ Մ. ԷՅ. — Դռնիակի առաջարկին հեղինակն ես էի, եւ ծողովն ընդունելով զայն՝ ի գործ դրած եղաւ մեր ներքին Կանոնագրին մի յօդուածն, որ կը տրամադրէ դռնիակ գումարուիլ ի հարկին : Իսկ զալով հրատարակութեանց կէտին, քաջ կը յիշեն երեսփոխանք որ լրագիրներն դռնիակ նիստով յուղուած ուղերձի խնդրոյն պարագաներուն եւ վիճաբանութեան մանրամասնութեանց վրայ բառ մ'անդամ չէին գրած, այլ այնքան եւ եթ ծանուցած էին թէ խնդիրն յաջորդ նիստին մնացած էր եւ զա-

1.
Խնդիր դռնիակ նիստի
(Միջադեպ)
ՇԱՀՊԱՋ Ն. ԷՅ. — Դռնիակ նիստերու նկատմամբ զիտողութիւն մ'ունիմ. Նախընթաց նիստն ալ դռնիակ էր, ինչպէս է այսօր.

նազան առաջարկի հեղինակներէ Մասնախումբ մը կազմուած էր մի նոր ծրագիր պատրաստելու համար: Իսկ ասկէ դուրս ինչ որ հրատարակուած էր, այն տնօրէնութեանց կը վերաբերէր, որոց համար չէր դժնփակ նիստն, եւ բնական էր որ արգելք մը չկար դանոնք հրատարակելու:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ես կառաջարկեմ դժնփակ նիստի ատենագրութիւնն հրատարակել, քանի որ միասակար եւ սքօզելու բան մը չկայ անոր մէջ:

ԷՔՍԷԻՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ լրագիրներն ազատ են ինչ որ լսեն հրատարակելու, եւ Ազգ. ժողովը չկրնար պատասխանատու նկատուիլ այդ հրատարակութեանց: Ազգ. ժողովոյ որոշումներն եւ գործողութիւններն իւր ատենագրութեան միայն կրնան ըստուգուիլ, եւ երբ ինք չհրատարակէ զայն, ինչ որ ալ գրեն հրատարակային թերթեր, նիստը դժնփակ կը մնայ միշտ:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Հարկ չեմ համարիր Գափամաճեան էֆէնտիի բացատրութեանց պատասխանելու, զորս տուաւ հրատարակութեանց մասին. երեսփոխանք տեսած են արդէն նոյն հրատարակութիւններն եւ գիտեն ինչ որ գրուած էր: Իսկ Եքսէրճեան էֆէնտիի գիտողութիւնն ուշադրութեան արժանի է: Կրսէ թէ լրագիրներն ազատութիւն ունին ինչ որ լրսեն հրատարակելու, եւ թէ ժողովին չը պատկանիր այդ հրատարակութեանց պատասխանատուութիւնն: Մենք արդէն որ եւ է գործ չունինք որ պատասխանատուութիւն հրաւիրէ մեր վրայ, եւ անոր հրատարակումն երկիւղ եւ անհանդստութիւն զգանք, միայն թէ ժողովին արժանապատուութեան կը դպչի որ գըռընփակ գումարէ նիստն, եւ հետեւեալ օրն լրագրաց մէջ կարգացունին տրուած որոշումներն, եւ ուղերձը ծրագրելու համար կազմուած Մասնախումբի անդամոց անուններն: Այս վիճակը կը նշանակէ թէ դժնփակ չէ նիստը, եւ կատակ մ' է զայն դժնփակ անուա-

նել, մանաւանդ երբ ժողովին գիւանը կը լուէ այդ հրատարակութեանց առջեւ, ըսել է թէ կընդունի դանոնք: Աստի իմ կարծիքս այն է որ կամ բնաւ պէտք չէ դժնփակ նիստ կազմել, եւ կամ եթէ դժնփակ պիտի լինի գումարուը, պէտք է հոգ տանիլ որ եղած գործողութիւնները չը հրատարակուին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կը տեսնեմ որ գըռընփակ նիստի սկզբունքը բոլորովին սխալ մեկնութիւն կընդունի: Գժնփակ նիստն երբէք այն նշանակութիւնը չունի թէ ինչ որ խօսուի ժողովին մէջ, կամ ինչ որոշում տեղի ունենայ, թագուն ու անյայտ պիտի մնայ: Կամ թէ այնպիսի խնդիրներ կը յուզենք հոս, զորս կարելի չէ հրատարակել: ոչ, այս չէ դժնփակ նիստի նպատակն. սքօզելու բան կայ, մեր մէջ մանաւանդ որ կարելի չէ այսպիսի ժողովի մը մէջ որ 140 անդամներէ կը բաղկանայ, որ եւ է բան թագուն պահել, վասն զի մէն մի անդամ ինչպէս բնական է, երբ իւր մէկ մտերմին աւկանջէն հծծէ խորհրդարար՝ ինչ որ խօսուած է ժողովին մէջ, եւ նա ալ ուրիշի մը յեղյեղէ իւր լսածն, ոչ եւս խորհուրդ կը մնայ, եւ համբաւն ամենուրեք զայն կը ծաւալէ: Մեր նիստերն հրատարակային են, բայց կրնան պատահիլ այնպիսի խնդիրներ, որոց վրայ երեսփոխանք 'ի ներկայութեան ժողովրդեան չկարենան իրենց կարծիքն ազատօրէն յայտնել, ուստի անոնց խօսելու ազատութիւնն որ եւ է ճնշումէ զերծ պահելու մտք սահմանուած է գըռընփակ նիստն: Արդէն խնդիր կայ, որու համար ներքին Կանոնագիրն մասնաւոր կերպով դժնփակ նիստ կը տրամադրէ, այն է Պատրիարքի դէմ եղած ամբաստանութեան քննութեանն համար գումարելի դատական նիստն, որ դժնփակ տեղի կուտենայ: Իսկ այսպիսի նիստերու ատենագրութեանց հրատարակումը պայմանի ներքեւ է: Կան ատենագրութիւններ՝ որ անմիջապէս կրնան հրատարակուիլ, կան որ ժամանակէ մը յետոյ, ինչպէս պահանջէ խնդրոյն բընութիւնն:

Անցեալ նիստին մէջ ուղերձին վիճարանութեան առթիւ ըրած խօսքերնուս նը-

կատմամբ, ինչպէս Գափամաճեան էֆէնտին գիտել տուաւ, լրագրաց մէջ, զորս կարգացիլ, բան մը չտեսայ հրատարակուած: Ինչ որ գրուած է, որոշման արդիւնքն էր միայն եւ ուրիշ քանի մը առաջարկութիւններ, որ նստին դժնփաց մասին վերաբերեալ էին, եւ անոնց հրատարակութեան համար արգելք մը չէր կրնար ըլլալ:

Լրագրապետներն ալ Հայ են, եւ ազգային զգացու՛ր ունին, մանաւանդ որ երեսփոխան են անոնցմէ շատը, եւ երբ դժնփակ նիստ մը լինի գիտեն եւ կրնան որոշել, թէ որ կէտերն կրնան հրատարակուիլ կամ ոչ: Հետեւեալէս ես աւելորդ կը տեսնեմ այս մասին խնդիր յարուցանել, առարկելով թէ դժնփակ նիստի խօսքերն դուրան հոչակ կը գտնեն, այլ կը բաւէ միայն երեսփոխանաց խնդիրը: Եւ որ զգուշութեամբ վարուին այս մասին, որպէս զի դժնփակ նստի մէջ եղած գործողութիւններն անժամանակ չսուին դուրսը:

ՁԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս միջադէպը փոքր կարգադրութեամբ մը կրնայ վերջ գտնել, եւ չեմ կարծեր որ վիճարանութիւնն աւելի հեռի մղել հարկ լինի:

Գժնփակ նստի սկզբունքն պարզ կերպով բացատրեց Փափազեան էֆէնտին, եւ ինչպէս գիտել տուաւ, նիստեր կան դժնփակ, որոց ատենագրութիւնն անմիջապէս, եւ կան որ ժամանակէ մը յետոյ կրնան ի լոյս ելնել: Այս պարագային մէջ լաւագոյն եղանակն է լրագրապետաց ազգասիրութեան եւ խոհեմութեան յանձնել որ Գիււանին հետ բանակցելով՝ հրատարակեն դժնփակ նիստերու արդիւնքն: Այս կերպով թէ ժողովուրդն անտեղեակ չմնար ժողովին տնօրէնութեանց, եւ թէ ինչ որ արժանի է անմիջական հրատարակութեան, այն կը ծանուցուի միայն, եւ անպատեհութիւնք չեն ծագիր: Ապա թէ ոչ՝ եթէ ամեն թերթ իւր ուղած կերպով հրատարակէ դժնփակ նիստերուն արդիւնքն, ստուգիւ այն ատեն խառնակութիւն կը ծագի, որ մինչեւ իսկ ազգային

բարեկարգութեան խանգարմանը պատճառ կրնայ ըլլալ: Արդ եթէ կը հաճիք այս միջադէպը կը փակենք այս կերպով:

(Հաւանութեան նշաններ)

Հետեւեալէս Ատենապետ էֆէնտին քուէի կը գնէ խնդիրն, եւ ժողովն 8 քուէի ընդդէմ՝ 18 քուէով ԿԸՎԱԿԷ սոյն միջադէպն՝ ըստ յայտարարութեան Ատենապետ էֆէնտիի:

2

Ատենական գործողութեանց վերաբերեալ գրեր

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութեանց վերաբերեալ թղթեր կան թէեւ, որ պէտք է ժողովին ներկայանան, սակայն դժնփակ նիստի չեն կարօտիր, եւ ըստ որում այս պահուս դժնփակ գումարուած ենք ուղերձի խնդրոյն համար, որ Օրակարգին մէջ առաջին տեղը կը բռնէ, ուստի եթէ կը հաճիք՝ անցնինք անմիջապէս Օրակարգին եւ ուղերձի խնդիրը վերջացնելէ յետոյ՝ ձեռք առնունք ատենական գործողութեանց թղթերը:

ՁԱՅՆԵՐ. — Շատ աղէկ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն անցնինք Օրակարգին:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



Ուղերձ ի պատասխանի Նախագահական զըրոյն.— Երազիր Յանձնախմբին (Դ.Ն.Ա.Կ.) :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը յիշէք, նախորդ նիստին մէջ Ժողովը վիճարանութեան ենթարկեց ուղերձի ծրագիրն, որ պատրաստած էր Ատենապետաց զիւանն : Սոյն ծրագրին խմբագրութեան վրայ զանազան քննադատութիւններ եւ առաջարկութիւններ տեղի ունեցան, եւ հուսկ յետոյ Ժողովն առաջարկի հեղինակաց յանձնեց, որ իբր Յանձնախումբ միանալով մի նոր ծրագիր պատրաստեն համախորհուրդ եւ ներկային : Սոյն Յանձնախումբն կատարելով իրեն յանձնուած աշխատութիւնն, ահաւասիկ կը բերէ մեզ այսօր նոր ծրագիրն ուղերձի, ստորագրեալ հեղինակաց կողմէ :

Ահաւասիկ կը ներկայեմ ձեզ սոյն ծրագիրն :

Հետեւապէս Ատենադպիր էֆէնտին կընթեանու ծրագիրն, որ ահաւասիկ :

Բարձրաշնորհ Տէր,

Ազգային Ժողովս ներկայ շրջանի բացման առթիւ պատիւ ունեցաւ լսել Ձեր Ամենապատուութեան դիրն, որով Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոսին կը յանձնարարէր բանալ Ժողովն եւ խմայնել թէ, «Յուսահատ չէք Աստուծոյ ողորմութենէն»

Բարձրաշնորհ Տէր, մեր հաւատքն անյեղի է Աստուծոյ ողորմութեան վերայ, զի չը կրաներ Նա զարդարն, մեր յոյսն մեծ

է մեր վեհապետին՝ Օգոստափառ Սուլթանին արդարախոհութեան եւ իւր Բարձր դաշնակցաց արդարասիրութեան վերայ : Իսկ Ձեր Ամենապատուութեան վերայ Ժողովս կը շարունակէ այն վստահութիւնն, որով Ձեր ջանից յանձնած է Ազգային գիրն :

Ժողովս աներկբայ է, Սրբազան Տէր, որ ներկայ պահուն յորում Հայաստանի բարենորոգման խնդիրն աշխարհվարական ասպարէզին մէջ կը յուղուի, պիտի յարատեւէր ազգին անհրաժեշտ պէտքերն ճշգիւ ներկայել ում որ անկ է, եւ պիտի յաջողիք որ թերի գիտակցութիւնն եւ թիւրմացութիւնն Ազգին իղձերն իրացընող պայմաններն չվտանգեն :

Ձեր Սրբազնութիւնն Ժողովոյս ուշադրութեան կը յանձնարարէ նաև Ազգային Պատրիարքարանի գործոց ներկայ վիճակն, յայտարարելով որ անձնական տկարութեան պատճառաւ քանի մ'ամիսէ ՚ի վեր չէք շարունակեր նախագահել Ժողովոց, եւ թէ չ'գիտէք թէ տակաւին որչափ ժամանակ պիտի պարտաւորիք այսպէս ընել :

Ազգ. Ժողովս ցաւ ՚ի սիրտ լսեց Ձեր Սրբազնութեան սոյն յայտարարութիւնն եւ նկատողութեան առաւ Ազգային գործոց տարտամ վիճակը, որ Ձեր բացակայութեան պատճառաւ օր աւուր ծանրանալու վրայ է : Սակայն Ժողովս կը յուսայ թէ վերջին օրերս քուէարկեալ վարչական օրինաց բարեփոխումը պիտի կըրնայ Ձեր Սրբազնութեան օժանդակ լինիլ, եւ վստահելի ու պատասխանատու խորհրդական պաշտօնէից գործակցութեան շնորհիւ կարելի պիտի ըլլայ Ձեզ ուղղութիւն տալ Ազգ. վարչական գոր-

ծոց, առանց չարաչար վաստակելու այն պատուական անձն, որսյ առողջական յողորդք վիճակն մեծ ցաւ է Ազգին. եւ որ, սակայն 1879 օգոստոս 10 ի հրապարակական խոստումը զո՛հ նուիրուած է արդէն Ազգային շահուց նուիրական տեղանոյն վրայ :

- Ռ. Յ. Պերպերեան
- Ս. Ասլանեան
- Ս. Պ. Պ. Փափագեան
- Լ. Պայեօզեան

1/13 Հոկտ. 1880
Ղալաթիա

(Յիտ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն ծրագիրը ձեր զիտողութեան կը մատուցանեմ այժմ. սակայն ներեցէք որ նախ այս մասին երկու խօսք ընեմ :

Երբ նախընթաց նիստին մէջ զանազան զիտողութիւններ եղան Ատենապետաց զիւաննին պատրաստած ծրագրին սլարունակութեան վրայ, յայտարարեցի թէ Դիւանի անդամոց խորհուրդներուն եւ կարծեաց համաձայն էր ուղղութիւնն սոսկ ատենաբանք հետեւի կուզէն ու Աստի ուղերձին ոգւոյն նկատմամբ կարծեաց տարբերութիւն մը չկար, այլ տարբերութիւնը անոր իմաստից բացատրութեան ոճին վերայ էր աւելի : Նոյն յայտարարութիւնը կը կրկնեմ այսօր, եւ զայս եւս կը յարեմ թէ Ատենապետաց զիւանն այս նոր խմբագրութեան դէմ մասնաւոր զիտողութիւն մը չկրնար ունենալ, քանի որ երկուքին ալ ոգին գրեթէ նոյն է, միայն այս վերջինը աւելի հակիրճ եւ ամփոփ կերեւի քան զմիւսն :

ԷՔՍԷՐՁԵԱՆ Տ. ԷՖ. — Նախորդ ծրագիրը նիստի օրէն առաջ երեսփոխանաց հաղորդուած եւ հետեւաբար անձնիւր երեսփոխան միջոց գտած էր զայն ուսումնասիրելու : Սակայն այս անգամ այդպէս չեղաւ, եւ այս նոր ծրագիրն միակ ընթերցումէ մը յետոյ մեր զի-

տողութեան ներկայացաւ : Կէտեր կային որ ես չկրցի ըմբռնել առաջին ունկնդրութեամբ, ուստի կառաջարկեմ որ անցեալ անդամուն նման միջոց արուելի երեսփոխանաց զայն սերտելու :

ՁԱՅՆԵՐ. — Թող նորէն կարգացուի :

ԻԻԹԻԻՁԵԱՆ Կ. ԷՖ. — Կը ձայնակցիմ էք-սէրձեան էֆէնտին, մանաւանդ որ Ատենապետաց Դիւանի անդամ եմ, եւ այդ նոր ծրագրէն տեղեկութիւն չունէի կանխաւ, որ հաւանութիւնս տուած լինէի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ նիստին Իւթիւճեան էֆէնտին ներկայ չէր եւ այն պատճառաւ չկրցաւ լսել նախորդ ծրագրին վրայ եղած զիտողութիւններն որք բնահակառակ չէին այն խորհրդոց ու կարծիքներուն, որ Ատենապետաց զիւաննին թեւադիր եղան ուղերձին խմբագրութեան ատեն : Իսկ այս նոր ծրագիրն, ինչպէս դիտել տուի պահ մ'առաջ, միեւնոյն ոգւով եւ տեսակէտով խմբագրուած կը նշմարեմ, եւ եթէ նախորդ ծրագրէն տարբերութիւն մ'ունի, այն ալ միայն համառօտութիւնն է, ուստի կը կարծեմ թէ Ատենապետաց զիւանն պատճառ չի պիտի ունենայ անոր դէմ մասնաւոր զիտողութիւն մը յետեւելու : Եւ հարկ չեմ տեսնել որ ինչ նիստի մը յետաձգելու : Խնդիրն արդէն ուսումնասիրուած է, եւ երկար վիճարանութեամբ մը պարզուած է անցեալ նիստին մէջ, այնպէս որ այլ եւս պէտք մնացած չէ ոչ ուսումնասիրութեան, ոչ լուսաբանութեան : Այս երկրորդ անգամն է որ դձնիակ նիստ կը գումարենք ուղերձի խնդրոյն համար, եւ եթէ տակաւին նիստ մ'ալ երկարենք, կը մտածեմ որ մի գուցէ իւր կարեւորութիւնը կորսնցնէ :

Եթէ առաջին ընթերցմամբ չկրցինք ամբողջ ըմբռնել նոր ծրագրին իմաստն, անգամ մ'ալ կը կարգաւք զայն, եւ եղած զիտողութիւնները լսել յետոյ, Ժողովս կընայ որոշել :

ՁԱՅՆԵՐ ԱՄԵՆՈՒՍՏ. — Այո, այո :

Հետեւապէս կը կրկնուի ծրագրին ընթերցումը :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Զ. ԷՖ. — Կառավարկեմ ուսմ որ անկ է խօսքին տեղ՝ որոց որ անկ է ըսել :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը կրկնեմ :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ինչ ձեւով ալ ըսուի, իմաստը միշտ նոյնն է :

ԷՔԱԼԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Երագրին իմաստը կատարելապէս հասկցուեցաւ : Սրբազան Պատրիարքն իւր նախագահական գրոյն մէջ ցաւ յայտնել էր որ իւր հիւանդութեան պատճառաւ բացակայ ստիպուած է մնալ Պատրիարքարանէն, եւ Ազգ. ժողովոյ յանձներ էր Ազգ. Պատրիարքարանի եւ գործոց վիճակին դարման տանիլ : Այս կէտին նկատմամբ սա պատասխանը կը տեսնեմ այդ ծրագրին մէջ «Ազգ. ժողովը ցաւ ի սիրտ լսեց Ձեր Սրբազանութեան սոյն յայտարարութիւնն եւ նկատողութեան առաւ ազգային գործոց տարտամ վիճակն, որ Ձեր բացակայութեան պատճառաւ օր աւուր ծանրանալու վրայ է : »

Այս պատասխանով մենք փոխանակ Սրբազան Պատրիարքը յուսադրելու, աւելի կը վիրաւորենք, եւ պատասխանատուութիւնն իւր վրայ նետել կը ջանանք :

Այս կէտին մէջ հակասութիւն մը կը տեսնեմ, եւ կը կարծեմ թէ այս տեսակ խօսքերը պէտք է բառնալ, եւ պարզ կերպով պատասխանել, ինչպէս նախորդ նիստին մէջ ըսաւ Պալեօղեան էֆէնտին :

ՄՈՒՐԱՏԵԱՆ Ա. ԷՖ. — Կը ձայնակցիմ :

ՊԱԼԵՕՂԵԱՆ Լ. ԷՖ. — Որովհետեւ էքսէրճեան էֆէնտին իմ մէկ խօսքս յիշեց, կուզեմ բացատրութիւն մը տալ թէ ինչ մտքով ըսած եմ զայն նախընթաց նստին մէջ : Ես համամիտ եմ ըստ ամենայնի այդ ծրագրին, ստուգիւ այդպիսի խօսք մ' ըրի, սակայն խօս-

քիս իմաստն հոն կը յանդէր թէ ինչ որ մեր վիճակը կը պահանջէր ըսել, զայն անպատուակ պէտք էր յայտնել ուղերձին մէջ : Այսօր անուրանալի է որ Սրբազան Պատրիարք ձօր բացակայութեան պատճառաւ մեր ներքին գործոց վիճակը վատթարացած է, եւ չեմ կարծեր որ նորին Սրբազանութիւնը ուղերձին մէջ այդ յիշատակութիւնը տեսնելով վիրաւորուելու պատճառ մ' ունենայ :

ՉԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս յայտարարեցի քիչ մ' առաջ, այս ուղերձի խնդիրն նախորդ նիստին մէջ երկար ու ջերմ վիճարանութենէ մը անցած՝ եւ պարզուած է այնքան՝ որ իւր որոշմանն յանդէրու վիճակին մէջ կը գտնուի սա պահուս, ուր այլ եւս ատենախօս չկայ, այլ միայն քուէ առաջարկողներ, ուստի նախ վիճարանութեան փակումը քուէի կը դնեմ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին վիճարանութեան փակումը քուէի կը դնէ եւ ժողովը կ'ընդունի զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահա ասիկ ժողովը վիճարանութիւնը փակեց, եւ ժամ է այլ եւս ուղերձի ծրագրին քուէի դնելու. բայց ըստ որում բարեփոխումներն առաջնութիւն ունին երբ կրկնող գտնեն, եւ Ալաճաճեան էֆէնտին բարեփոխում մ' առաջարկեց եւ ձայնակից գտաւ իրեն, ուստի նախ զայն քուէի կը դնեմ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես իմաստի տարբերութիւն մը չեմ տեսնել Ալաճաճեան էֆէնտինի առաջարկած բարեփոխման եւ ծրագրին բառերուն մէջ : Նոյն են ըստ իմաստի ուսմ որ անկ է, եւ որոց որ անկ է խօսքերը. ուստի չեմ կարծեր որ փոփոխութիւն մ' ընդունիլ հարկ լինի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ձեմ կարծեր որ մեծ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

3.

Խնդիր վաւերացման Դեմիակ Երեսօրու Ատենագրութեանց

(Միջադէտ)

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Ժողովը նախընթաց շրջանին մէջ քանի մը դձուրեակ նիստեր ունեցաւ կարեւոր խնդիրներու համար, սակայն այդ նիստերու ատենագրութիւնները չը վաւերացան ցարդ. ուստի կառավարկեմ զանոնք վաւերել, զի այդ վաւերումն ապագային մէջ մեծ նշանակութիւն ունի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ ատենագրութիւնք երբ ժողովը որոշէ, կրնան օր մը կարգացուիլ զարձեալ դձուրեակ նիստի մէջ եւ վաւերիլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ձեմ կարծեր որ այս վերջին դձուրեակ նիստի ատենագրութիւնն հրատարակելու արդեւք մ' ունենանք, ուստի կառավարկեմ զայն ի լոյս հանել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանն այդ մասին կը տնօրինէ զարժանն :

4.

Երեսփոխան Ք. Ղազարոսեան ԷՖ.ի առաջարկն՝ հրատարակելու բացակայ երեսփոխանաց ցկատմամբ :

Երեսփոխան Ղազարոսեան էֆէնտինի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկն կարգացուեցաւ :

Իրաւունք մ' ունենանք Ալաճաճեան էֆէնտինի առաջարկած բարեփոխումը բոլորովն ժխտելու վասն զի ծրագրին մէջ կը տեսնենք քիչ մը վերջ սա սողերը գրուած «Մեր յոյսը մեծ է մեր Վեհապետին՝ Օգոստոսիան Սուլթանին արդարախոսութեան եւ իւր բարձր դաշնակցաց արդարափութեան վրայ» : Ահա այս սողերուն պատճառաւ է որ Ալաճաճեան էֆէնտին կառավարկէ որոց որ անկ է բառերը դնել, ծրագրին բացատրութեան տեղ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այո՛, ես ալ ճիշդ այդ նկատողութեամբ ձայնակցեցայ Ալաճաճեան էֆէնտինին :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Զ. ԷՖ. — Ձեմ պնդեր որ ծրագրին բացատրութիւնը նոյն իմաստը չունի ընաւ, սակայն լաւ է որ բացորոշ լինի բացատրութիւնն, եւ այս նպատակաւ այս բարեփոխումն առաջարկեցի :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Ալաճաճեան էֆէնտինի առաջարկած բարեփոխումն, եւ ժողովը մեծադոյն մասամբ կ'ընդունի զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այլ եւս ուրիշ բարեփոխում չկայ առաջարկուած, ուստի ուղերձի ծրագրին ամբողջութիւնը քուէի կը դնեմ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին ուղերձի ծրագրի քուէի կը դնէ, եւ ժողովը միաձայն կ'ընդունի զայն անփոփոխ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եւ այժմ որ ժողովը քուէարկեց ուղերձն, Մայր դիւանին կը մընայ ըստ ներքին կանոնագրի՝ նորին Սրբազանութեան մատուցանել զայն ի դիմաց ժողովոյդ՝ Դիւանը պիտի փութայ իւր այս պարտաւորութիւնն կատարել. այժմ այլ եւս խնդիրը փակուած է եւ դձուրաց է նիստին շարունակութիւնն : Արդ պէտք է թողուք օրակարգը եւ անցնինք ատենական գործողութեանց, զորս ետքի վերապահեցինք :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգային ժողովոյ

Նկատելով որ Ազգ. երեսփոխանն
ընեն երեսնի չափ հրաժարեալ կան և նո-
ցա տեղն ցարդ ընտրութիւն եղած չէ :

Նկատելով որ նոյնչափ երեսփո-
խանք ևս իրենց բացակայութեամբն ըստ
օրինի դադարեալ կը համարուին :

Ուստի կառաջարկեմ որ հրաժարեալ
երեսփոխանաց տեղ ուրիշներ ընտրել տա-
լու խնդիրն յառաջիկայ նստին թողլով՝
վերջին անգամ մ' ևս հրաւեր ուղղուի
բացակայ երեսփոխանաց , ծանուցուելով
իրենց՝ որ եթէ սոյն վերջին հրաւերն ան-
պատասխանի թողուն և բացակայութիւն
նին շարունակեն՝ ըստ օրինի դադար-
եալ պիտի համարուին և իրենց տեղ նո-
րոգ ընտրութիւն պիտի կատարուի :

Այսպէս երբ վերոյիշեալ երեսփոխա-
նաց ընտրութիւնն կատարուի և նոցա
թիւն ամբողջանայ կը յուսամ թէ պիտի
կարենամք ազատիլ այն դժուարութիւն-
ներէն՝ որ միշտ մեծագոյն մաս փնտռու
և ժամանակին ատեան բանալու համար
տեղի կունենան :

Ուստի կխնդրեմ որ Ազգ. ժողովոյս
հաճութիւնն ստանալով , ՚ի գործադրու-
թիւն յղուի առ Գործադիր իշխանութիւն :

Ազգ. երեսփոխան
Ք. Ղազարոսեան

3 Հոկտ. 1880

(Յետ ընթերցման)

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Կը ձայնակցիմ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ իրաւացի է
Ղազարոսեան էֆէնտի առաջարկն , միայն թէ

արդէն սոյն խնդիրն նկատողութեան առնուած
և Յանձնախմբի մը քննութեան յանձնուած է ,
որուն տեղեկագիրն Օրակարգն է և ընդ հուպ
ժողովին որոշման պիտի ներկայանայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ստոյդ է , բայց
Յանձնախմբին քննած խնդիրն այս չէ միայն ,
ալ ուրիշ խնդիրներ ալ կան անոր կցորդուած ,
որով թերեւս շատ երկարի որոշումն , մինչդեռ
այս խնդիրն ժողովոյ գոյութեան խնդիրն է , և
իրբ այն՝ պէտք է ամէն բանէ առաջ զայն նկա-
տողութեան առնուի և որոշել :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Ղազարոսեան էֆէնտի
առաջարկն երկու կէտ ունի , մին հրաժարեալ
երեսփոխանաց ընտրութեան կը վերաբերի , և
միւսն բացակայից համար տրամադրուած կանո-
նին գործադրութեան : Երկրորդ կէտն վերա-
պահելով ետքի՝ կարծեմ կրնանք առաջինն
յանձնել Վարչութեան ի գործադրութիւն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Առաջարկին զանազան
մասերն իրարմէ անջատել աւելորդ է , և ա-
ւելի բանաւոր է զայն իւր ամբողջութեամբ
նկատողութեան առնուի , երբ բացակայու-
թեան խնդրոյն քննիչ Յանձնախմբին տեղե-
կագիրն՝ որ Օրակարգին մէջ երկրորդ տեղը կը
բռնէ , ներկայանայ : Ուստի եթէ կը հաճիք
սոյն խնդիրը նոյն ժամանակին կը վերապա-
հենք :

Ժողովը ԿԸ ՀԱԽԱՆԻ Ատենապետ էֆէնտի
յայտարարութեան :

Երեսփոխան Ք. Ղազարոսեան Էֆէնտիի երկ-
րորդ առաջարկն՝ ներքին կանոնագրի տը-
պագրութեան մասին :

Երեսփոխան Ղազարոսեան էֆէնտի կող-

մէ մատուցեալ յետագայ առաջարկը կար-
դացուեցաւ :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգային ժողովոյ

Ինչպէս քաջ գիտէք , Ազգ. ժողովս
ներքին կանոնադրութիւն մ' ունի . պէտք է
ուրեմն ըստ օրինի այդ կանոնադրէն մէն
մի օրինակ դտնուի իւրաքանչիւր երեսփո-
խանաց և մինչև իսկ Ազգ. Գաւառական
Վարչութեանց . թով , մինչդեռ քաջ գիտեմ
որ այսօր երեսփոխանաց ստուար մեծա-
մասնութիւնն չունի այդ կանոնադրէն :

Ուստի կառաջարկեմ որ այդ կանո-
նագիրն նորէն տպագրել տալէ յառաջ՝
յղուի առ Նախաձեռնութեան Գիււանն ,
որպէս զի յիշեալ կանոնադրութեան ըն-
դունելութենէն ի վեր ժողովս ինչ ներ-
քին կանոններ որ յաւելցուցեր է , զա-
նոնք ևս կցէ և դտնուածներն ի քնին
առնլով՝ արժան դտածներն բարեփոխէ և
ներկայէ ժողովոյս որպէս զի յետ վաւե-
րացման յանձնուի տպագրութեան :

Կը խնդրեմ որ սոյն առաջարկու-
թիւնս Ազգ. ժողովոյս որոշումն ստանա-
լէ վերջ՝ յղուի առ Նախաձեռնութեան
Գիււանն :

Ազգ. երեսփոխան
Ք. Ղազարոսեան

3 Հոկ. 1880

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս տեղեկացաք ,
Ղազարոսեան էֆէնտի կառաջարկէ ժողովիս
ներքին կանոնադրը տպագրել տալ , այն
պայմանաւ սակայն որ Նախաձեռնութեան
Գիււանի միջոցաւ նախ նոյն կանոնադրին կըց-
ուին ժողովին կողմէ ի վերջէ յաւելեալ յօդ-

ուածներն , ընդհանրապէս նոյն կանոնադրին
վրայ արժան դտուած բարեփոխումները
կատարուին , և ժողովին վաւերացման զը-
րոշմն ընդունելէ յետոյ՝ կանոնադրին երկրորդ
անգամ տպագրուի :

Այս առաջարկին նկատմամբ գիտողու-
թիւն ունի՞ք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ առաջարկն
գլխաւորապէս երկու կէտ կը պարունակէ ,
մին է ներքին կանոնադրը տպագրել , նորոգ
յաւելեալ յօդուածները կցելով , և երկրորդն է
արժան դտուած բարեփոխումներն ընել ընդ-
հանրապէս Բարեփոխման կամ սրբազրութեան
պէտք չկայ , մանաւանդ որ այժմ ժամանակն
ալ չէ ասոր : Իսկ տպագրութիւնն պէտք է
յաւելեալ յօդուածներն առանձինն կանո-
նագրին հաին կցելու պայմանաւ , եթէ ըս-
պառած է այդ կանոնադրին : Ես կը յիշեմ
որ ժամանակաւ 4—500 օրինակ տպագրուե-
ցաւ այդ կանոնադրէն , ես կեցայ այն ատեն
տպագրութեան գործին գլուխն , միթէ ամբողջ
օրինակներն սպառեցան և այլ եւս չգտնուի՞ր
Մի՞ գոցէ Պատրիարքարանի մէկ անկիւնը
նկտուած լինին , ինչպէս թուղթերն մէն մի
անկիւն ձգուած են Ուստի լաւ է որ մի ան-
գամ խուզարկուի , և եթէ սպառած է իրօք ,
այն ատեն կրնայ տպուիլ , յաւելեալ յօդուած-
ներն մէկտեղ կցուելով անշուշտ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես դեռ սոյս օ-
րերս Պատրիարքարանի մէջ խուզարկել տուի ,
և ոչ մի օրինակ կրցի գտնել այդ կանոնա-
գրէն , զի սպառած է բոլորովին : Փախաղեան
էֆէնտին բարեփոխում չընդունիր , ևս ալ
այդ կէտին վրայ չեմ պնդեր ևս առաջարկիս
այդ մասն յետս կը կոչեմ , սակայն տպագրու-
թեան կէտին վրայ կը պնդեմ ցվերջ , և այն
պայմանաւ որ յաւելեալ նոր յօդուածներն ալ
կցուին ի միասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ այդ կանոնադրին
սպառած լինելուն համար երկրորդ անգամ պի-
տի տպագրուի , ես կառաջարկեմ անոր լե-

զուհե ալ կոկել եւ յարգարել, եւ այս գործը խմբագրութեան Գլխանին յանձնել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ կանոնագրին բարեյիշատակ հեղինակին եւ ալ պահ մ'աշխատակից գտնուեցայ: Ի սկզբան կանոնագրին արդէն միանգամ տպագրուած էր հեղինակին կողմէ: Սահմանագրութեան հետ անհաշտ կէտեր կային մէջը, ուստի Ս. Պատրիարքն այն ատեն յանձնարարեց ինձ. որ Մայր Գլխանին մէջն էի, Ռուսինեան էֆէնտիի հետ միանալ եւ հաշտեցնել կանոնագրին Սահմանագրութեան հետ: Այս առթիւ նաեւ անոր լեզուին վրայ զիտողութիւն ըրի իրեն, սակայն յաւերժիշատակ հեղինակին Ռուսինեան, երբ կը տեսնէր որ իւր լեզուին փոփոխութիւնը կը պահանջուի, այնքան կզգածուէր որ կարծես թէ իւր հաւատքին դպեր էին: Նա որ այնքան անկըքելի էր իւր սկզբանց մէջ, իւր կանոնագրէն մեծամեծ զոհեր յանձն առաւ ընել, ոչ ուրիշ նպատակաւ, այլ միայն անոր ոճն անայլայլ պահելու համար եւ այսպէս բարեփոխութիւններով տպագրուեցաւ կանոնագրին եւ ընդունուեցաւ ժողովէն: սակայն լեզուն անեղծ մընաց, ինչպէս որ ելեր է հեղինակին գրչէն:

Արդ՝ քանի որ այժմ կանոնագրին բազմաշխատ հեղինակին մեռած է, եւ ընաւ շեմ հաւանիր անոր լեզուն, որու յարած էր այնքան եռանդազին, այլայլել, այլ հարկ կզգամ իւր գրչին սեպհական կնիքն, իւր ընատիպ ոճն անեղծ եւ անայլայլ պահել ըստ ջերմագրին բաղձանաց մեր հողերոյս պաշտօնակցին:

Իսկ յաւելեալ յօդուածներն ալ որ Ստեփան փաշայի կողմէ առաջարկուած եւ ընդունուած են ժողովէն՝ նոյնպէս իրենց հեղինակին լեզուին պէտք է կցուին կանոնագրին իրր յաւելուած:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Կը ձայնակցիմ փափաղեան էֆէնտիի եւ ի յարգանս հանդուցելոյն յիշատակին՝ կառաջարկեմ կանոնագրին լեզուն անեղծ պահել:

ԳԱՐԱԳԱՇ Ն. ԷՖ. — Ես կառաջարկեմ ոչ միայն լեզուն սրբագրել, այլ նաեւ մեր

պիտոյից համեմատ եթէ բարեփոխում մը հարկ է, զայն եւս կատարել:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Իմ նպատակէս հետի է կանոնագրին բարեյիշատակ հեղինակին արժանիքն ժխտել կամ անոր լեզուն դատարկեալ, միայն կը բաղձայի որ կանոնագրին ոճն պաշտօնական լեզուի գրոշմն ընդունէր, յորմէ զուրկ է, եւ կը կարծեմ թէ այս մասին եւ միայնակ չեմ զի ուրիշներ մի եւ նոյն զիտողութիւնն ըրած են ուրիշ անգամ: Սակայն եւ այնպէս իմ առաջարկիս վրայ չեմ ուզեր պնդել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը բաւէ որքան վիճարանութիւն որ եղաւ սոյն խնդրոյն վրայ, պէտք է այլ եւս քուէի դնել զայն:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Քանի որ նախալրճիս առաջարկուած չէ, չկրնար խնդիրը քուէի դրուիլ, այլ հարկ է զայն Նախաձեռնութեան գլխանին յղել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնագրին տպագրութեան մասին եղած առաջարկն նախաքըննութիւն չենթադրեր, եւ ոչ իսկ նախալրճուի կը կարօտի, քուէի դրուելու համար: Ժողովին ներքին կանոնագրին, որ անձնիւր երեսփոխանի ձեռք պէտք է գտնուի, սպառեր է, եւ տարակոյս չկայ թէ պէտք է տպագրուի: Ահա ինքնին նախալրճիս մ'է այս: Իսկ Ատենադպիր էֆէնտիի առաջարկն, որ կանոնագրին լեզուն սրբագրութիւնը կը պահանջէ, եւ զոր կրկնեց Գարագաշ էֆէնտին յաւելուածով մը, գրաւոր ներկայացեալ չէ, որպէս զի ժողովը կարենայ զայն իւր նկատողութեան առարկայ ընել, ուստի այդ մասին եւս որ եւ է գործողութիւն մը չկրնար կատարուիլ կարծեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ ճշմարիտ է այս զիտողութիւնը: Միակ առաջարկ մը կար գրաւոր Քրիստոստուր էֆէնտիի կողմէ, որ երկու բան կը պահանջէր, տպագրել ժողովին ներքին կանոնագրին, որ սպառեր է, նորոգ

յաւելեալ յօդուածները կցելով անոր. Բ. բարեփոխել այս առթիւ կանոնագրին այն յօդուածներն որ բարեփոխման կարօտ կը թուին: Ի վերջէ առաջարկի հեղինակին յետս կոչեց անոր երկրորդ մասն, առաջին՝ այն է տպագրութեան կէտին վրայ պնդելով: Հետեւապէս հարկ է որ երկրորդ մասն ի բաց թողլով ժողովը կաճը խնդրեմ թէ կընդունի՞ կանոնագրին տպագրութեան առաջարկն:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին խընդիրը քուէի կը դնէ: Եւ ժողովը միաձայն՝ ըստ առաջարկի Ղազարոսեան էֆէնտիի կՈՐՈՇԷ ներքին կանոնագրին տպագրել տալ, իրր յաւելուած կցելով անոր ի վերջէ յաւելեալ յօդուածներն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրիշ առաջարկ մ'ալ տեղի ունեցաւ Մէլիքեան եւ Գարագաշ էֆէնտիներու կողմէ: Բայց ըստ որում այդ առաջարկը գրաւոր ներկայացեալ չէ, ինչպէս կը տրամադրէ կանոնն, այդ մասին չէ կարելի այժմէն որ եւ է գործողութիւն կատարել, եւ երբ ըստ կանոնի դրով հաղորդեն զայն, այն ատեն գլխանը կրնայ ժողովին նկատողութեանը մատուցանել: Ուստի կը թողունք զայն առ այժմ մեկուսի եւ կանցնինք ուրիշ գործողութեանց:

6.

Երեսփոխան Ք. Ղազարոսեան Էֆէնտիի երրորդ առաջարկն Ազգ. ժողովոյ ատենագրութեանց եւ ներքին բարեկարգութեան մասին:

Երեսփոխան Ղազարոսեան էֆէնտիի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկը կարգացուեցաւ:

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային ժողովոյ

Ասկէց առաջ առաջարկած էի Ազգ.

Ժողովոյս ատենագրութիւններն փոխանակ 200ի 600 օրինակ տպագրել տալ եւ Գաւառ. վարչութեանց եւ Մայրաքաղաքիս Թագ. խորհրդոց եւս յղել որպէս զի նորա եւս գիտակցութիւն ունենան Ազգ. ժողովոյս օրոշմանց:

Ազգ. ժողովս ընդունելով սոյն առաջարկս ըստ այնմ հրահանգ տուաւ վարչութեան եւ այսօր 600 օրինակ կը տպագրուի թէեւ, սակայն Ազգ. Երեսփոխաններէն զատ ոչ ոք կստանայ այդ ատենագրութիւններն:

Ժամանակ մը սոյն ատենագրութիւններն կը յղուէին Գաւառական Ժողովոց եւ Թագ. խորհրդոց եւ նոյա գներն կը պահանջուէին, սակայն այսօր այդ որոշումն բոլորովին ընդհատուած է:

Ուստի կառաջարկեմ որ Ազգ. ժողովս հրահանգ տայ Ազգ. վարչութեան յիշեալ ատենագրութիւններն ըստ առաջնոյն Գաւառական Ժողովոց Է. Թագ. խորհրդոց յղելու եւ նոյա գներն պահանջելու:

Ազգ. ժողովոյս ներքին կանոնագրութիւնն պաշտօն յանձնած է Պատրիարքական փոխանորդութեան Ժողովոյս ներքին բարեկարգութեանց հսկել, սակայն նորա իրենց պաշտօնին զբաղմանց պատճառաւ անկարող եղած են գրեթէ սոյն հսկողութեան պաշտօնն եւս կատարել:

Ուստի կառաջարկեմ որ Ազգ. ժողովս մասնախումբ մը կազմէ թէ Ատենագրութեանց խնդրոյն վրայ եւ թէ ժողովոյ ներքին այսօրինակ բարեկարգութեանց հսկելու համար, որպէս զի ժողովս գիտնայ թէ ո՞վ է բարեկարգութեան հսկողութեան պաշտօններն ըստանձնող մարմինն եւ ըստ այնմ պահանջ

Չէ անոնցմէ այն խնդիրներն, որ ժողովոյս ներքին բարեկարգութեան կը վերաբերին:

Ուստի կը խնդրեմ որ սոյն առաջարկութիւններս Ազգ. ժողովոյս որոշման ենթարկել բարեհաճիք:

Ազգ. Երեսփոխան

Ք. Ղազարոսեան

3 Հոկտ. 1880

(Յեա ընթերցման)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչ որ Քրիստոստուր էֆէնտին կառաջարկէ ատենագրութեանց մասին, արդէն որոշուած խնդիր մ' է, սակայն անգործադրելի մնացել է որոշումն, եւ այս պատճառաւ է որ այդ առաջարկը կը ներկայանայ մեզ, որ նոյն որոշումն կը յիշեցնէ եւ գործադրութիւնը կը պահանջէ: Թէ ի՞նչ է այս անգործադրութեան պատճառն, հարկ էր հարցընել Վարչութեան եւ քննել, սակայն ըստ որում Վարչութիւնն հրաժարած է, կը մնայ այլ եւս անոր գործադրութիւնն յանձնարարել նոր Վարչութեան: Իսկ առաջարկի երկրորդ մասն, որ մասնախումբ մը կը պահանջէ ժողովին ներքին բարեկարգութեան համար, իւր նկատառման ժամն ունի, վասն զի արդէն ժողովն իւր ներքին գործերը կատարելու համար ելմտական Յանձնախումբ մ' ունի, որ սլտի կազմուի ի մօտոյ, եւ երբ կարգը գայ այդ ընտրութեան կրնայ նկատողութեան առնուիլ այդ խնդիրն: Այս տեսութեամբ կառաջարկեմ Քրիստոստուր էֆէնտին առաջարկին առաջին մասն յանձնել Վարչութեան ի գործադրութիւն: Իսկ երկրորդը վերապահել ելմտական Յանձնախումբի ընտրութեան պահուն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ որում սոյն խնդրոյն վրայ ուրիշ խօսք ուղղող չկայ, ժողովին կամքը սլտի խնդրեմ այս մասին, ըստ առաջարկի Փափագեան էֆէնտին:

Հետեւապէս Ատենագրեալ էֆէնտին խնդրը բուէի կը դնէ, եւ ժողովը միաձայն՝ ըստ առաջարկի Փափագեան էֆէնտին՝ ԿՈՐՈՇ Է Ղազարոսեան էֆէնտին առաջարկի առաջին՝ այն է ատենագրութեանց վերաբերեալ մասն, յանձնել Ազգ. Վարչութեան ի գործադրութիւն, իսկ երկրորդը վերապահել ելմտաօրց Յանձնախումբի կազմութեան պահուն:

7.

Երեսփոխան Մ. Փափագեան Էֆէնտինի առաջարկը Կիլիկիոյ վիճակաց մասին:

Երեսփոխան Փափագեան էֆէնտինի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկը կարգացուեցաւ:

Կը կարդանք աղգային թերթերու մէջ թէ Կիլիկիոյ առաջնորդական վիճակներն ոչ սահմանադրապէս կազմեալ գաւառական Վարչութիւն ունին եւ ոչ առաջնորդ, եւ այս մասին Կիլիկիոյ Կաթողիկոսին եւ աղգային Պատրիարքարանի մէջ թղթակցութիւնը կը շարունակուի: Նաեւ անցեալները կարգացինք լրագրաց մէջ թէ Վարչութիւնը վերջնադիր մը զրկած է առ Կաթողիկոսն Կիլիկիոյ:

Կերեւի թէ Կիլիկիոյ Սրբազան Կաթողիկոսը Վարչութեան այն հրահանգք որ 1874ին ընդունուած եւ հրատարակուած է Կիլիկիոյ վիճակաց համար, չուզեր ճանաչել, եւ այն թուականէն մինչև ցարդ բանակցութիւնը կը շարունակուի, առանց արդիւնք մը ձեռք բերելու եւ Կիլիկիոյ վիճակներն ալ կը մնան անհովիւ եւ անկազմ:

Կեղը. Վարչութիւնն ցարդ այս

խնդիրն չներկայեց Ազգ. ժողովիս, սակայն ես կը կարծեմ թէ պէտք էր որ ժողովիս ներկայեր ցարդ եւ այդ տարիներուն [կորստեան տեղի չտար: Ուստի կառաջարկեմ որ ժողովս որոշէ թէ այս խնդրոյն վերաբերեալ թղթակցութիւններն իրեն մատուցուին առանց այլ եւս յապաղման իրբեւ նիւթ առաջին սպիտակ տետրի հրատարակման:

Ազգ. Երեսփոխան

Ս. Պ. Պ. Փափագեան

3 Հոկտ. 1880

(Յեա ընթերցման)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Մասին լրագիրի ձեռնին) Այդ առաջարկը մատուցեր էի արդէն, երբ երեկի Մասիսը, զոր ժամանակ չէի ունեցեր կարգալու, աչքէ անցնելով սահ մ'առաջ, Բերիայէն ուղղուած մի նամակ տեսայ, որ Կիլիկիոյ վիճակաց վրայ տրտմալի տեղեկութիւններ կը հաղորդէր: Նամակին սա տողերը արժանի են ուշադրութեան եւ ահաւասիկ կը կարդամ:

«Մինչդեռ Կիլիկիոյ Վեհաշնորհ Կաթողիկոսը եւ Կոստանդնուպօլսոյ Սրբազան Պատրիարքը իրենց մէջ կը վիճաբանին փոխադարձ իրաւասութեանց վրայ, Կիլիկիոյ խեղճ ժողովուրդը կը հեծէ եւ կը տոչորի, ինքզինքը անզուրկ, լքեալ եւ որ աւելի ցաւալին է իւր տղէտ, անխիղճ անկրօն քահանայից ապօրինի ընթացքը տեսնելով:»

Նամակագիրը կը շարունակէ իւր տեղեկութիւններն եւ կեղրակացնէ:

«Վեհ. Կաթողիկոսն եւ Սրբազան Պատրիարքը, վաղ ընդ փոյթ այս Կիլիկիոյ վիճակին առաջնորդական իրաւասութեանց խնդիրը վերջնականապէս լուծելու են եւ խեղճ ժողովուրդն անհովիւ քահանայից շահամուլթեան ճարակ եւ կուսակցութեան զոհ ձգելու չեն:»

Այս տողերն կապացուցանեն թէ Կի-

լիկիոյ աղգային գործոց վիճակը խիստ վատ թարած է, թէ առաջնորդ կը խնդրեն եւ չը տրուիր, եւ թէ Պատրիարքարանին եւ Կաթողիկոսին միջեւ իրաւասութեան խնդիր մը ծագած է, որու վրայ մենք տեղեկութիւն չունինք ցարդ: Ահա այս պատճառներու համար կառաջարկեմ որ սոյն խնդրոյն վերաբերեալ թղթակցութիւններն ներկայանան ժողովին, որպէս զի տեսնենք թէ ի՞նչ է խնդիրն եւ ի՞նչ հետեւանաց յանգեր է:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ կը կրկնեմ Փափագեան էֆէնտինի առաջարկը եւ կը յարեմ թէ Ազգ. Վարչութիւնն՝ ըստ որում հրաժարեալ իւր գործոց համարատուութիւնը պէտք է ամբողջապէս ներկայէ, որպէս զի կարելի լինի ընդհանուր գաւառաց վիճակին վրայ տեղեկութիւն ստանալ, վասն զի կը լքանենք որ շատ գաւառներ անհովիւ մնացած են:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Գափամաճեան էֆէնտինն նոր առաջարկ մը կընէ, որ տարբեր է իմ առաջարկէս: Ժամանակէ մը ի վեր Վարչութեան եւ Սոյ Կաթողիկոսին միջեւ թղթակցութիւն մը բացուեր է, որ կը շարունակուի եղեր ցարդ, ինչպէս հրատարակային թերթեր կը ծանուցանեն: Ես կը պահանջեմ այժմ որ այդ թղթակցութեանց սպիտակ տետրն ներկայանայ ժողովիս: Այս ժողովս արդէն Վարչութեանն այս եւ այն խնդրոց համար սպիտակ տետրով համար պահանջելու իրաւունք ունի, եւ կը յիշէք որ անցեալ նիստին մէջ երբ խնդիր յուղուեցաւ թէ Վարչութիւնն իւր հրաժեշտին հետ նաեւ իւր համարը չէր մատուցաներ, նոյն ինքն Ստեփան փաշան, հեղինակն սպիտակ տետրի առաջարկին, ըսաւ մեզ թէ պէտք չէ սպասէք դուք որ Վարչութիւնն ինքնաբեր տայ իւր համարն, այլ կրնաք երբ որ ուղէք այս կամ այն խնդրոյն վրայ: Համար պահանջել իրմէ: Արդ ես այժմ կառաջարկեմ որ Պատրիարքարանի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսին միջեւ փոխանակուած թղթակցութիւնները ներկայանան Ազգ. ժողովոյ, ուսցութիւնները ներկայանան Ազգ. ժողովոյ, ուստի կրնայ առաջարկս յղուիլ Վարչութեան:

պետին, որ անշուշտ կը հաղորդէ ժողովին նոյն թղթերն, եթէ անժամանակ չհամարի, եթէ ոչ կը պատասխանէ մեզ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ փափազեան էֆէնտին կարեւոր խնդրոյ մը վրայ եղած թղթակցութիւններն կը պահանջէ, ուստի եթէ կը հաճիք առանց վիճարանութիւնն երկարելու, կը յղենք իւր առաջարկը Սրբազան Պատրիարք Հօր: Եթէ ՚Ն՝ Սրբազանութիւնն անժամանակ չդատիր առաջարկն, կը ներկայէ պահանջուած թղթակցութիւնն, եթէ ոչ կը վերադառնէ պատեհ ժամուն:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Կիլիկիոյ վիճակաց նկատմամբ ես ալ իբր խմբագիր շատ անգամ դաւաճներէն նամակներ կընդունիմ, եւ կընամ պնդել թէ չկայ վիճակ մ'այնքան լքեալ եւ անխնամ, որքան է Կիլիկիոյ վիճակն. ուստի փափազեան էֆէնտի առաջարկին կարեւորութիւնը կը հաստատեմ եւ կը կրկնեմ թէ պէտք է Սրբազան Պատրիարքին յղել զայն ի դործադրութիւն:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ ես փափազեան էֆէնտի առաջակին անմիջապէս ձայնակցեցայ, պատճառն այն էր որ մեր ազգային ներքին վիճակն բարւոքելու նպատակ մը նշմարեցի անոր մէջ: Սակայն փափազեան էֆէնտի առաջարկը մասնականութիւն մ'ունէր, եւ ես ուզեցի զայն հանրականի վերածել եւ այս նպատակաւ Վարչութեան ընդհանուր համարատուութիւնը խնդրեցի:

Ես ալ իբր խմբագիր դաւաճներու վիճակին վրայ ոչ նուազ տեղեկութիւն ունիմ, եւ գիտեմ որ ընդհանրապէս ներքին բարեկարգութեանց մեծ պէտք ունին:

ՂԱԶԱՐՈՍԵՐՆ Ք. ԷՖ. — Նախընթաց նստին մէջ երբ Վարչութեան համարատուութեան տեղեկագիրը պահանջեցի, ըսին ինձ թէ Ըսպիտակ տեսող պիտի մատուցուին համարատուութիւնը: Շատ աղէկ, Սպիտակ տեսող

կուղեմ Կիլիկիոյ խնդրոյն վրայ: Կիլիկիոյ կաթողիկոսին եւ անոր արարքներուն վրայ արդէն հոս խնդիր յուղուած եւ Վարչութեան յանձնարարութիւնն հղած է, սակայն չենք գիտեր ինչ հետեւանք ունեցած է: Տարիներ կանցնին եւ ընաւ ոչ տեղեկութիւն եւ ոչ համար կստանամք նոյն իսկ յանձնարարեալ խնդրոց վիճակին վրայ: Եւ քանի որ այժմ Կիլիկիոյ խնդիրը կայ, պէտք է որ գէթ անոր վերաբերեալ թղթակցութեանց Սպիտակ տեսողը պահանջենք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ առաջարկս խիստ պարզ էր, եւ չգիտեմ ինչո՞ւ այսքան կը կնճճուի: Վարչութեան եւ Կիլիկիոյ կաթողիկոսին միջեւ բանակցութիւն մը բացուեր է, ես կառաջարկեմ որ այդ բանակցութեան թղթերն ներկայանան ժողովին:

Իրաւ է որ այժմ Վարչութիւնն չկայ, սակայն կեցած է անոր Պետն որ է Սրբազան Պատրիարքն, ուստի շատ բնական է որ իմ առաջարկս Նորին Սրբազանութեան յղուի ի դործադրութիւն: Եթէ Սրբազան Պատրիարքն արժան դատի, պահանջուած թղթերը կը հաղորդէ ժողովին, իսկ եթէ անժամանակ համարի, կը պատասխանէ թէ առ այժմ չկրնար դաննք հրապարակել:

ԶԱՅՆ ՄՐ. — Կը կրկնեմ փափազեան էֆէնտի առաջարկն:

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Այն ուղերձին մէջ, զոր պահ մ'առաջ քուէարկեցինք եւ որ պիտի մատուցուի Սրբազան Պատրիարք Հօր, յայտնած ենք արդէն Նորին Սրբազանութեան մեր ազգային ներքին դործոց տարտամ վիճակըն, զոր ընդհանրապէս դարմանի կարօտ գրտնելով քուէարկած ենք Վարչական կազմակերպութեան արդի նոր օրէնքն, իբրեւ միջոց Ազգային դործոց բարւոք ուղղութիւն մը տալու: Իսկ այժմ փափազեան էֆէնտին մասնաւորապէս իյուշ ածելով մեզ՝ Կիլիկիոյ վիճակաց տխուր կացութիւնն, պաշտօնական բա-

նակցութեանց թղթերը կը պահանջէ: Իսկ Գափամաճեան էֆէնտին աւելի ընդարձակելով այս պահանջումն, ընդհանուր գնահատաց վիճակը կուղէ հասկնալ եւ ընդհանուր համարատուութիւն մը կը պահանջէ:

Ես թէ մին, թէ միւսն ներկայ պարագայից մեջ աւելորդ կը գտնեմ, վասն զի մենք ըմբռնած ենք արդէն մեր ներքին դործոց անդհացուցիչ վիճակն եւ առ ՚ի դարման օրէնք մը քուէարկած ենք, որու համաձայն Վարչութիւնը պիտի կազմուի բոլորովին տարբեր դրութեամբ: Անշուշտ նոր վարչութիւնն մեր ազգային ներքին դործոց վիճակն իւր ուշադրութեան նիւթ պիտի ընէ, եւ պէտք եղած միջոցները ձեռք առնու. ուստի պէտք է սպասենք առ այժմ, եւ եթէ բան մը կայ անոր յանձնարարելու, կընանք այդ յանձնարարութիւն ընել, եւ վերջապէս սպասենք եւ տեսնենք թէ ինչ պիտի ընէ: Եթէ անպիտի գտնուի, յայժմ մինչ որ արժան է կը անօրինենք:

Ահաւասիկ այս պատճառներով ես անժամանակ կը գտնեմ այդ կրկին առաջարկն, եւ անոնց մերժումը կառաջարկեմ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուղեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական դործողութեանց չըջանին մէջ այսքան երկար վիճարանութիւն չվերցնել խնդիրն, եւ հարկ էր ըստ կանոնի անոր վրայ միանգամ թեր ու դէմ խօսուելէ յետոյ՝ վերջ գտնել:

Առաջարկ մը կայ փափազեան էֆէնտի կողմէ, որ Կիլիկիոյ Կաթողիկոսին եւ Վարչութեան միջեւ փոխանակուած թղթակցութիւններն կը պահանջէ, Կիլիկիոյ վիճակաց տխուր կացութիւնը յիշեցնելով, առաջարկութիւն մը, որ ձայնակիցներ կը գտնէ. իսկ Պէրպէրեան էֆէնտի այս առաջարկն անժամանակ կը համարի եւ անոր մերժումը կը պահանջէ, առարկելով թէ մեր ազգային ներքին դործոց վիճակն արդէն ծանօթ է, թէ անոր բարւոքումը ձեռք բերելու համար Վարչական կազմութեան նոր օրէնք մը քուէարկուած է, եւ թէ նոր Վարչութիւնն անշուշտ այս մասին պէտք եղած դարմանը պիտի տնօրինէ:

Արդ այս մասին պէտք է որ այժմ ժողովին կարծիքն խնդրեմ եւ վերջացնեմ խնդիրն:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իբր հիղինակ առաջարկի՝ միշտ վերջին խօսքն իմս է, ուստի խօսք կուղեմ իմ առաջարկս վերջին անգամ մ'ալ եւս բացատրելու եւ պաշտպանելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեմ կրնար այլ եւս խօսք տալ ձեզ, բայց եթէ ժողովին՝ կամքը խնդրելով այս մասին: Ուստի ժողովին կը հարցընեմ թէ կուղէ վերջին անգամ մ'ալ ըսել փափազեան էֆէնտին:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին այս կէտք քուէի կը գնէ, եւ ժողովը մեծագոյն մասամբ ԿՈՐՈՇԷ առաջարկին հեղինակը լսել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը ձերն է այժմ փափազեան էֆէնտի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ ընդդիմախօս Պէրպէրեան էֆէնտի լաւ չէ ըմբռնած առաջարկիս ողին, եւ այս թիւրիմացութեան առիթ եղան այս բացատրութիւններն, զորս Գափամաճեան էֆէնտի տուաւ իմ առաջարկս պարզելու մտք եւ ինքն ալ ընդհակուր համարատուութիւն մը պահանջեց: Ստոյգ է որ Վարչական կազմակերպութեան նոր օրէնք մը քուէարկեր ենք մեր ներքին դործերն կանոնաւոր ուղղութեան մէջ գնելու համար, ստոյգ է որ նոր վարչութիւն մը պիտի գայ այդ նոր օրինաց համաձայն կազմակերպեալ, սակայն միթէ այդ նոր օրէնքն, այդ նոր վարչութիւնն կը ջնջէ մեր համարատուութեան իրաւունքը, միթէ իրաւունք չունինք հրաժարեալ վարչութեան ընթացից եւ դործոց տեղեկանալու. կարել է չէ վարկեան մ'անգամ մտաբերել թէ մեր այդ իրաւունքը ջնջուած լինի, մեր իրաւունքն է միշտ այս ուսայն խնդրոյն վրայ տեղեկութիւն ու համար ուզել Սպիտակ տեսողով, ինչպէս որոշուած է վերջին անգամ:

Այս իրաւունքն է որ դործադրելով

պիտի պահանջենք հիմա վարչութեան Պե-
տէն Կիլիկիոյ խնդրոյն վերաբերեալ թղթ-
թակցութիւններն, զորս ինչպէս ըսի ար-
դէն, եթէ արժան գատի Ս. Պատրիարքն
կը հաղորդէ ժողովին, թէ ոչ կը թողու պա-
տեն ժամուն: Աւստի իմ առաջարկս զերծ է
որ եւ է անտեղութենէ եւ այնքան բնական
է, որքան է՝ համարատուութեան լիրաւունքն
այս ժողովին էութեան:

Ահա այս է իմ վերջին խօսքս:

ՇԱՀՊԱԶ Ե. ԷՖ. — Ըստ որում առաջար-
կը բարեփոխում մը կրնայ, եւ գործադրութիւնն
Ս. Պատրիարք Հօր կամաց յանձնուելու պայ-
ման յաւելցաւ, կընդունիմ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն Փափաղեան է-
ֆէնտի առաջարկն այդ պայմանն ունէր իւր
հետ եւ այժմ որ լսեցիք իւր վերջին բացատ-
րութիւնն, որով իւր առաջարկը պաշտպանեց,
քուէի կը զնեմ զայն:

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին քը-
ւէի կը զնէ խնդիրն եւ ժողովը մեծադոյն մա-
սամբ ԿՈՐՈՇԷ ըստ առաջարկի Փափաղեան է-
ֆէնտի՝ Կիլիկիոյ Կաթողիկոսին եւ Վարչու-
թեան միջեւ փոխանակուած թղթակցութիւնը
պահանջել Ս. Պատրիարքէն:

8

Երեսփոխանաց ոմանց առաջարկը
Թաղային մատակարարութեան մասին

Երեսփոխանաց ոմանց կողմէ մատուցեալ
յետադայ առաջարկը կարգացուեցաւ:

Մեծապատիւ Ատենապետ էֆ.

Աղղային ժողովոյ

Ստորագրեալ Երեսփոխանքս ու-

շաղրութեան առնելով ընդհանուր թա-
ղերու վիճակն եւ զայն անյապաղ բար-
ւաբելու կարօտ դանելով, կառաջար-
կենք Սահմանադրութեան մէջ թաղային
մատակարարութեան գլխին անմիջապէս
վերաքննութեան ենթարկել:

Գիւրութեան համար կառաջարկեմք
նաև սոյն խնդիրն Ատենապետաց գիււա-
նին յանձնել, այս պայմանաւ որ կամ նոր
ծրագիր մը բերէ ընդհուպ կամ արդէն
կեցած ծրագրին վրայ հարկ դատուած
բարեփոխութիւնները կատարէ:

Աղղ. Երեսփոխանք

Մ. Գարամաճեան
Ա. Յ. Ա. յիւզեան
Ռ. Յ. Պերպիբեան Պողոս Էքսերճեան

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս տեղեկացար
սոյն առաջարկը Սահմանադրութեան թաղային
մատակարարութեան գլխոյն վերաքննութիւնը
կը պահանջէ ի ձեռն Ատենապետաց գիււանին:
Այս մասին ինչ գիտողութիւն ունիք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ահա առաջարկ մը,
որ հանրական պիտոյք մը մեզ կը յիշեցնէ, եւ
նախափճոյ կը կարօտի: Աւստի կառաջարկեմ
ընդունիլ զայն, եւ յղել Ատենապետաց գիււա-
նին

(Հաւանութեան նշաններ)

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի
կը զնէ խնդիրն - եւ ժողովը միաձայն ըստ ա-
ռաջարկի Փափաղեան էֆէնտի՝ ԿՐՆԳՈՒՆԻ
հինգ երեսփոխանաց առաջարկը թաղային մա-
տակարարութեան գլխոյն վերաքննութեան մա-
սին՝ եւ կը յղէ զայն Ատենապետաց Գիււանին:

9.

Խնդիր Երեսփոխանայ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը յիշեք որ ժողովն
իւր նախորդ նիստին մէջ Երեսփոխանայ խնդ-
րոյն քննութեան պատուիրակ Ստեփան փա-
շայի կողմէ եղած յայտարարութեանց վրայ՝
որոշեց Ս. Պատրիարքէն տեղեկանալ թէ սոյն
խնդրոյն նկատմամբ ինչ անօրինութիւններ
խորհուած եւ գործադրուած են, եւ միանգա-
մայն ուղեց տեսնել վանուց բարեկարգութեան
վերաբերեալ գրերն: Մայր գիււանը ժո-
ղովին սոյն որոշումը հաղորդելով Ս. Պատրի-
արք Հօր՝ պէտք եղած դրութիւններն եւ տե-
ղեկութիւնները խնդրեց եւ ի պատասխան՝ ըն-
կալաւ Նորին Սրբազնութենէն սա նամակն,
զոր ահաւասիկ կը ներկայեմ Ձեզ:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին կըն-
թեանու Ս. Պատրիարք Հօր նամակն:

Ատենապետ էֆէնտի

Աղղային ժողովոյ

Մնցեալ 1879 Օգոստ. 24 նստին մէջ
պատկառելի ժողովոյդ կողմանէ առ իս
եւ ինձ աջակից Յանձնաժողովոյն արուած
լիազօր իշխանութեան ողւոյն եւ տառին
համեմատ, Երեսփոխանայ պարտուց բարձ-
ման խնդրոյն վրայ, միանգամայն Երու-
սաղիմայ Միաբանութեան եւ Ս. տեղեաց
մասին խորհրդակցելով հետեւեալ որո-
շումներն ըրինք:

Ա. — Միաբանութեան հաշուետու-
մարները եւ ելմտի գործողութեանց վե-
րաբերեալ բոլոր կէտերն ի մտոյ քննել
եւ պարտուց ճիշդ գումարը որոշել:

Բ. — Միաբանութեան հետ բանակ-
ցելով, Կեղբոնական վարչութեան հետ

ունեցած յարաբերութիւնները բարւոքել
եւ սակէ ետքը Միաբանութեան գործո-
ղութիւնները կանոնաւորել եւ ասանկով
թէ՛ Միաբանութեան եւ թէ՛ Ս. տեղեաց
ապագայն ապահովելու միջոցներ հաս-
տատել:

Գ. — Յանուն Երեսփոխանայ հանգա-
նակութիւն բանալ աղղայնոց մօտ եւ ե-
րեք տարուոյ մէջ հաւաքուած նուէրը Ե-
րեսփոխանայ պարտուց բարձման ծառա-
յեցնել:

Դ. — Մնահասոյթ եւ կամ ի զուր ծախք
պատճառող կալուածները ծախել եւ դո-
յացած գումարին մէկ մասը պարտուց եւ
միւսն՝ եկամուտ տուող կալուած գնելու
յատկացնել, Միաբանութեան պիւտճէն
կարգադրելով:

Ըստ այնմ՝ նախկին Ատենապետ Ընդ-
հանուր ժողովոյ Վսեմ: Ստեփան փաշայն
լիազօր իշխանութեամբ իրր երեսփոխան
Յանձնաժողովոյս եւ պարտուպատշաճ հը-
րահանգներով զինեալ՝ Միաբանութեան
ներկայացաւ ՚ի 12 Նոյեմբեր 1879, եւ
գրեթէ երեք ամսուան մէջ Յանձնաժո-
ղովս գահացնող կերպիւ իւր պաշտօնը լը-
րացուց:

Վսեմ: Ստեփան փաշայն՝ գլխաւոր
գործողութեանց մին Միաբանութեան
նոր կանոնագիրն է, որն որ կը ներկայա-
ցնեմք ժողովոյդ: Սոյն կանոնագիրը
Յանձնաժողովն քննելով, արժան համա-
րեց իրեն արուած լիազօր իշխանութեան
համեմատ վաւերացնելու:

Յանձնաժողովոյն՝ ուրիշ գործողու-
թեանց դալով, ինչպէս հանգանակու-
թեան մասին, Յանձնաժողովն ինչ որ ալ
ըսէ կիսկատար պիտի ըլլայ, վասն զի հա-
ղիւ թէ հանգանակութիւնը սկզբնաւո-
րութիւն առած է. ուստի այս մասին տե-
ղեկութիւն տալն ուրիշ ժամանակի ձգե-

լով, կը գիմեմք պատկառելի ժողովոյդ, որպէս զի Յանձնաժողովոյս վաւերացուցած կանոնագիրը արուի անմիջապէս իրր օրէնք վարչական և իւր գործադրութիւնն ենթարկէ որու որ անկ է և այսպէս վարչական նոր յարաբերութիւններն ընդ միարանութիւն սկզբնաւորութիւն ունենան անմիջապէս:

21 Սեպտ. 1880

Մնամ աղօթարար
Նախագահ

Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման

Յանձնաժողովոյ

Պ Կ.

Ներսէս Արքեպիսկոպոս

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն գրոյն հետ Սըրբազան Պատրիարքը յուղարկած է նաև Երուսաղիմայ վանուց կանոնագիրն որ կը կենայ ժողովն սեղանին վրայ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Նախորդ նխախնայ մէջ ես էի առաջարկողն որ Երուսաղիմայ խնդրոյն վերաբերեալ թղթերն ժողովին ներկայանան: Արդ՝ իբր հեղինակ առաջարկի, այժմ ես կառաջարկեմ նախ՝ որ սոյն կանոնագիրն հաղորդուի երեսփոխանաց, Երկրորդ՝ Երուսաղիմայ Վսեմ. Պատուիրակն այդ կանոնագրին հետ, ինչպէս լսեցինք, ընդարձակ տեղեկագիր մ' եւս մատուցած է, որ Երուսաղիմայ վիճակին նկարագիրն է լի կարեւոր տեղեկութիւններով: Այդ տեղեկագիրը չէ յուղարկուած, ուստի կառաջարկեմ զայն եւս խնդրել Նորին Սրբազնութենէն, եւ հետեւապէս անցնել խընդիրն օրակարգն, եւ յառաջիկայ նխախնայ տողութեան առնուլ այդ կանոնագիրն, որու հեղինակն առ այժմ մեր մէջ տեսնելու բարեբաղդութիւնն ունինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ կը համարիմ յայտնել որ Մայր Գիւանն իւր նամակաւ Սըրբազան Պատրիարքէն խնդրած էր որ Երուսաղիմայ խնդրոյն վերաբերեալ կանոնագիր, ծրարագիր և ինչ որ կայ զերջապէս զրկելու շընորհ ընէ: Իսկ Ս. Պատրիարքն միայն կանոնագիր մ'ուղարկած է մեզ այս նամակով:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ձեռ կարծեր որ Սրբազան Պատրիարքը մոռնայ կամ չհասկնայ ինչ որ գրեր էք իրեն: Գեա վայրկեան մ'առաջ երբ կորոչէիք Կիլիկիոյ Կաթողիկոսին վերաբերեալ թղթակցութիւնները տեսնել, կը փութայիք յարել նաև թէ Նորին Սրբազնութիւնն ազատ էր երբ անժամանակ դատէր ձեր խնդիրը, պատե՛հ աթթի յետաձգել զայն: Արդ՝ կերելի թէ միեւնոյն հարկը ներկայ պարագային մէջ կը ծանրանայ Սրբազան Պատրիարքին վրայ, եւ կտախէ զինքը միայն Երուսաղիմայ կանոնագիրն յղել ձեզ, իսկ աւոր հետ կցորդեալ տեղեկագիրն առ այժմ հըրապարակ չհանել: Սրբազան Պատրիարք Հօր գրած պատասխանագրէն ակն յայտնի կերելի որ բովանդակապէս հասկցած է ձեր ըսածն, եւ միայն կրցածն կատարեր է:

Ես ալ ի մօտոյ գիտակ եմ այն պատճառներուն, որ զինքն այս զգուշութիւններն ընելու կը մղեն, ուստի կաղաչեմ որ նոր ի նորոյ խնդիրներ յուղելով դժուարութիւն չդիզէք գործին առջեւ: Ինչպէս է որ հետաքրքրութիւն զգաք այդ տեղեկագիրը տեսնելու, բայց քանի որ կանխահաս եւ անպատշաճ գործ մը կը համարուի այսօր անոր հրապարակումը, լաւ է որ չսխդենք եւ Ս. Պատրիարք Հօր քայլերով յառաջանանք այս խնդրոյն մէջ: Սակայն ձեզմէ ամեն ոք ազատ է Նորին Սըրբազնութեան զիմելու եւ այդ տեղեկագիրը կամ ուրիշ ինչ թուղթ որ կայ տեսնելու, եւ չեմ կարծեր որ Ս. Պատրիարքը մերժէ ձեզ ցոյց տալ զանոնք:

Գիտե՛ք անշուշտ որ այդ տեղեկագիրն իմ գրչէս ելած է, սակայն ոչ թէ միայն իմ պատուիրակութեան պաշտօնիս գործերը պատմեր եմ անոր մէջ, այլ նոյն իսկ Երուսաղիմայ վանուց վիճակն, իւր ամէն կողմնորովը նկա-

րագրեր եմ հոն մանրատպատու: Երուսաղիմայ վիճակին նկարագրութիւնն աննշան բան մը չհասկնաք, լիազօր իշխանութեամբ իբր պատուիրակ երթալ հոն, յանուն եւ ի դիմաց ազգին ամեն ինչ քննել, թափանցել, ամենայնի հասու լինիլ, կարգադրել, անշուշտ նշանակութեան արժանի արդիւնքներ յառաջ կը բերէ: Եւ զգործ մը որ միանգամայն օգտակար պիտի լինի, բայց կրնայ նաև այդ օգուտը ի վնաս յեղաշրջիլ, եթէ հրապարակուի ինչ որ խոհեմութիւնն առ այժմ սքօղել կը հրամայէ: Այդ տեղեկագիրն մէջ, անտեսական խնդիր, հաշուոյ խնդիր, կրթական խնդիր կայ, որ կրնան հրապարակուիլ, սակայն կայ նաև քան զամէնն փախկազոյն եւ ծանրակշիռ խնդիր մ'այն է յարաբերութեան խնդիրն օտար ազգաց հետ, խնդիր մը, որու զգուշեալ պէտք է մերձիլ: Պօլիս չեղած Երուսաղէմ կար, եւ Երուսաղէմ ի վաղնջուց առնչութիւններ ունեցած է օտարաց եւ Կառավարութեան հետ, եւ այդ յարաբերութեան խնդիրն քաղաքական ասպարէզն ելնելով կրնայ վնասներ ծնիլ: Աւերջապէս պէտք է գիտնալ թէ տեղեկագիրն խղճի մտօք եւ կատարեալ անկողմնակալութեամբ գրուած է մանրակրկիտ եւ իբր այն՝ ծանրակշիռ տեղեկութիւններ կը պարունակէ, փախուկ խնդրոց եւ նոյն իսկ անձնականութեանց վրայ, բարձր ու միջակ դասէ: Ամէն բան անշուշտ չկրնար ի վերայ տանեաց քարոզուիլ, եւ երբ Սրբազան Պատրիարքը խոհեմութիւն կը համարի այդ տեղեկագիրն հրապարակ չհանել, պէտք է որ մենք ալ նոյն խոհեմութենէն առաջնորդուիմք եւ ստիպումներ չընենք այս մասին: Օր մը թերեւս կրնայ երեւան գալ, բայց երբ այլևս վնասակար հետեւանք մը չունենայ: Կը կրկնեմ եթէ անպատճառ զայն տեսնալ կուզէք, կրնաք անձամբ Սրբազան Պատրիարքին զիմել եւ տեսնել, կամ եթէ այսպէս ընել չէք ուզեր, կրնաք նաև ձեր կողմէ յանձնախումբ մը կարգել, ինչպէս ըրիք երբեմն Ազգային խնդրոյն համար, եւ այդ յանձնախումբը կերթայ կը տեսնէ այդ տեղեկագիրն եւ ձեզ լուր կը բերէ թէ զո՞նացուցիչ է կամ ոչ: Ես եթէ իբր պատուիրակ դացի պէտք եղած քննութիւնն ըրի եւ իրաց վիճակը բարեօրելու հա-

մար՝ պէտք եղած միջոցներն անօրինեցի այդ կանոնագիրն յօրինելով, ի՞նչ իշխանութեամբ եւ որո՞ւ անունով ըրի այս ամէնն, եթէ ոչ ազգին, դուք ազգէն, Պատրիարքը ձեզմէ եւ ես Պատրիարքէն ընտրեալ յանուն եւ ի դիմաց ազգին ըրի, ինչ որ ըրի: Զօրս ամիս կայ որ յուղարկեր եմ այդ կանոնագիրն ու տեղեկագիրն եւ այլ եւս չկրնար յապաղիլ աւոր գործադրութիւնն: Ժամանակն յաջողութեան մի էական տարրն է, ամէն գործ իւր պատե՛հ ժամուն պէտք է կատարել եւ ամենէն յուսալից ձեռնարկն ամենէն վատթար հետեւանաց կը յանդի, երբ անժամանակ տեղի ունենայ: Ուստի իմ փափաքս այն է որ օգուտ յառաջ բերելու ատեն վնասուց տեղի չտանք: Երուսաղիմայ միաբանութիւնն ակնգէտ կըստ պատէ այդ կանոնագրին, որ մեծամեծ խօսքերով ընդունել տրուած է իրենց, եւ իրենց ձեռքը չհասնիր, կը կասկածիմ որ դառն հետեւանքներ յառաջ գան:

Կանոն մը որքան ալ գերազանց նախատեսութեամբ շինուած լինի, միշտ վերաքննելի է, զի միշտ իւր թերի կողմը կուենայ, զոր փորձըն ի վեր կը հանէ: Երուսաղիմայ վանուց համար կանոնագիր մը պէտք էր, եւ զայն կարելի չէր Պօլսոյ մէջ չինել առանց Երուսաղէմը տեսնելու, առանց իրաց վիճակին խելամուտ լինելու: Ուստի կանոնագիրը հոն շինուեցաւ եւ ձեզ ներկայացաւ: Այս կանոնագիրն ըզգեստ մ' է, որ հազնող անձին վրայ չափուելով շինուած է: Այս է բովանդակ եղածն եւ վարանելու բան չկայ: Արդէն կանոնագրին մէջ երկու տարի պայմանաժամ տրամադրուած է անոր վերաքննութեան համար, եւ կրնաք զայն բարեփոխել: Այժմ եթէ վստահութիւն ունիք վրաս, կը վստահիք նաև Ս. Պատրիարք Հօր՝ որու յանձններ էք սոյն խնդիրն, հաճեցէք վաւերել այս կանոնագիրն եւ վանքն օգուտ պիտի քաղէ անտի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ Սրբազան Պատրիարքն իւր նամակին մէջ բացորոշ կերպով յայտնէր թէ միայն կանոնագիրը կը զրկէ իսկ տեղեկագիրը հրապարակել պատշաճ չը դատիր, այն ատեն անշուշտ չէինք պահան-

Ջեր . բայց այս մասին ակնարկութիւն մը չկար իւր նամակին մէջ եւ այս պատճառաւ պահանջեցի որ տեղեկագիրն ալ հաղորդուի ժողովին : Այս մասին Ստեփան փաշայն բացատրութիւններ տուաւ , որոցմէ այնպէս կերեւէր թէ Սրբազան Պատրիարքը պատշաճ չէ համարած նոյն տեղեկագիրը ներկայել :

Ուստի չեմ պնդեր այլ եւս իմ պահանջմանս վրայ , մանաւանդ քանի որ անոր հեղինակն մեր մէջ է , եւ կրնանք զինքը լսել , եւ կառաջարկեմ որ կանոնագիրն հաղորդուի երեսօխանաց , եւ յառաջիկայ նիստին Օրակարգն անցնելով , խնդիրն նկատողութեան առնուի :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ . — Ես պատրաստ եմ պէտք եղած բացատրութիւնները տալու :

ԴԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ . — Ես իբր երեսօխան այդ տեղեկագիրը տեսնել կուզեմ եւ ուրիշ բան չեմ զիտեր :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ . — Շատ աղէկ . կը գիմէք Ս. Պատրիարքին եւ կը տեսնէք :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ . — Ես գէտ պիտի խօսիմ , բայց ոչ թէ խնդրոյն սկզբան , այլ ձեռք առնուած միջոցին գէտ : Երուսաղիմայ վանքն երեսուն հազար ոսկի պարտք ունի , ստուգիւ ահագին դումար մը , եւ Յանձնախումբ մը կայ որ եռանդեամբ կը ջանայ նպաստ հանգանակել , եւ զայն բառնալ : Սակայն չեմ զիտեր ինչ պատճառաւ կը յայտարարէր զորոնք արդեօք ազգն իւր նպաստը կը զլանայ , բայց անկարելի է այսպիսի ենթադրութիւն մը , ինչ է արդեօք յապագման պատճառը : Շատ հաւանական է որ ազգը կուզէ իւր երեսօխանական ժողովին միջոցաւ հասկընալ խնդիրն եւ ըստ այնմ իւր օգնութիւնը մատուցանել : Ուր որ վստահութիւն կայ , հոն գործ մը զիւրութեամբ կը յաջողի : Ըսել չեմ ուզեր բնաւ թէ պատուիրակ փաշային կամ Յանձնաժողովին վերայ վստահութիւն չունինք : Բաւ լիցի , սակայն այս խնդրի ընդհանուր

վստահութեան կը կարօտի , ուստի կառաջարկեմ , ինչպէս Հայկական խնդրոյն առթիւ եղաւ , Յանձնաժողով մը կարգել որ երթայ բոլոր դրութիւնները քննէ , եւ գայ մեզ վրստահութիւն յայտնէ : Երուսաղիմայ խնդրոյն նկատմամբ , եւ այն ատեն ազգը պատրաստ պիտի լինի իւր զոհողութիւնը մատուցանելու :

Այս առաջարկը կընեմ ոչ ուրիշ գիտումով , այլ գործին յաջողութեան նպատակով համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Կերեւի թէ Գափաման էֆէնտին լաւ ուշադրութիւն չէ մատուցած Սրբազան Պատրիարք Հօր պատասխանագրին , որ կատարելապէս պարզած է այն կէտն , որու վրայ յենելով Գափաման էֆէնտին այդ առաջարկը կը մատուցանէ :

Նորին Սրբազնութիւնն իւր գրոյն մէջ կըսէ :

« Յանձնաժողովոյն ուրիշ գործողութեանց դարով , ինչպէս հանգանակութեան մասին , Յանձնաժողովն ինչ որ ալ ըսէ այսօր կիսկատար պիտի ըլլայ , վասն զի հաղիւ թէ հանգանակութիւնն սկզբնաւորութիւն առած է . ուստի այս մասին տեղեկութիւն տալն ուրիշ ժամանակի ձգելով , կը գիմենք Պատկառելի ժողովոյք , որպէս զի Յանձնաժողովոյս վաւերացուցած կանոնագիրը տրուի անմիջապէս իւրբոր օրէնք վարչական եւ իւր գործադրութիւնն ենթարկէ , որու որ անկ է եւ այսպէս վարչական նոր յարաբերութիւններն ընդ միաբանութիւն սկզբնաւորութիւն ունենան անմիջապէս : »

Այս սողերէն ակն յայտնի կերեւի թէ Յանձնաժողովն երբէք անյաջողութեան մը հանդիպած չէ , զոր կենթադրէ Գափամանեան էֆէնտին , եւ ոչ իսկ ժողովուրդն կասկած մը յարուցած է եղած տնօրէնութեանց նկատմամբ : Հետեւապէս տեղի չունին Գափամանեան էֆէնտիի զիտողութիւնն ու վարանքը այդ կէտին նկատմամբ : Արդէն այսօր խնդրոյն մանրամասնութեանց մէջ չենք կարող մանել , զի օրակարգէն դուրս է խնդիրն : Առաջարկ մը կար Փափաղեան էֆէնտիի կողմէ

որ կը պահանջէր խնդիրն Օրակարգ անցնել եւ Երուսաղիմայ կանոնագիրն երեսօխանաց ցրուելով յառաջիկայ նիստին մէջ նկատողութեան առնուլ : Փափաղեան էֆէնտին այդ կանոնագիրն հետ նաեւ Ստեփան փաշայի կողմէ մատուցեալ տեղեկագիրն ալ պահանջեց . սակայն ի վերջէ փաշային բացատրութեանց վրայ այդ կէտն ի բաց թողուց իւր առաջարկէն : Այս է ահաւասիկ խնդրոյն վիճակն :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ . — Ես կառաջարկեմ խընդիրը նախաքննութեան յղել :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ . — Կարծեմ անցեալ նիստին ես էի ըսողը ձեզ թէ պիտի մեկնեմ Պօլիսէն , թէ հաղիւ քանի մը նիստի պիտի կարենամ ներկայ գտնուիլ , եւ ես էի խնդրոյն , որ եթէ Երուսաղիմայ խնդիրն յուզել կուզէք նկատողութեան առնուք զայն գէթ իմ ներկայութեանս , որ կարենամ պէտք եղած բացատրութիւնները տալ : Այս յայտարարութիւնըս առիթ ընծայեց ձեզ սոյն խնդրոյն վերաբերեալ թուղթերն եւ տեղեկութիւններն խնդրելու : Նորին Սրբազնութեան կողմէ եկած պատասխանագրէն կիմանանք այժմ որ դուք լիազօր իշխանութեամբ Յանձնաժողով մ'ունիք եղեր , որ պէտք եղած քննութիւնները կատարեր , ինչ ինչ տնօրէնութիւններ ըրեր , եւ միաբանութեան համար պատրաստուած կանոնագիրն քննելու եւ վաւերելու է : Իսկ այժմ ձեզ կը գիմէ որ անոր գործադրութիւնն հրամայէք : Թէեւ այդ կանոնագիրն մատուցեալ էր , ի վաւերացումն ազգային երեսօխանական ժողովոյ , ինչպէս նշանակուած է վերան :

Սակայն Յանձնաժողովը զինքը ձեռնհաս եւ արտօնեալ գտեր է զայն վաւերելու , եւ ինչ որ ըրեր է դարձեալ ձեր տուած իշխանութեան յենելով ըրեր է , ընդ նախադահութեամբ Սրբազան Պատրիարք Հօր : Սակայն այժմ ձայներ կը լսեմ այդ կանոնագիրը նախաքննութեան յղելու , եթէ դուք այսպիսի տրամադրութեան մը մէջ կը գտնուիք , եւ կամ եթէ մտադիր էք օրակարգն անցնելով

խնդիրն , այդ կանոնագիրը քննել եւ բարեփոխել , այն ատեն մի նոր գործ , նոր կերպարան կատանայ խնդիրն , եւ կը նշանակէ թէ Յանձնաժողովն գործերը կը մերժեք :

Թէ ուր կը յանգի այսպիսի ընթացքի մը հետեւանքն , երբ խնդիրն Երուսաղիմայ խընդիր է , եւ ստիպողական հանգամանք մ'ունի , լաւ մտածեցէք : Այս տեսակ տրամադրութեան մ'երկու բան կը հետեւի , կամ այն թէ մոռցեր էք ձեր նախորդ որոշումն , եւ լիազօր Յանձնախումբի մը կազմութիւնն , եւ կամ այն թէ կը յիշէք ինչ որ տնօրինելու էիք կանխաւ , եւ այժմ կը ջնջէք նախորդ որոշումն :

Արդ իրաց այս վիճակին մէջ խնդիրն օրակարգը հանցուցած կամ չյղած զայն նախաքննութեան , հարկ է որոշէք թէ ինչ կերպարան ունի խնդիրն , եւ այնուհետեւ յուզէք զայն , որպէս զի որոշ քայլերով կարենաք շարժիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Կարծեմ թէ ձեր առաջարկին եզրակացութիւնը սա է որ խնդրոյն սկզբունքն որոշուի այսօր :

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ . — Առէն բանէ առաջ պէտք է գիտնանք թէ ես չեմ պնդեր որ կանոնագիրն այսօր անպատճառ վաւերի եւ գործադրութեան հրաման ընդունի : Յանձնախումբ մը դրեր էք դուք , եւ այն արտօնութեամբ որով զինքը էք զայն , այդ կանոնագիրը քննելու եւ վաւերելու է : Չունէ՞ր արդեօք էապէս այդպիսի իշխանութիւն մը եւ զայն կարծեց վայելել , եւ զեղծում մը գործեց , ահա այս խնդիրը կը ծագի , քանի որ կանոնագիրը նախաքննութեան յղելու եւ այլ այսպիսի կարծիքներ երեւան կեղնեն , ուստի հարկ կը ըլլայ որ նախ այս կէտն որոշէք , օրակարգն անցնելով զայն եւ այնուհետեւ ձեռք առնուիք բուն խնդիրն :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ . — Ես էի նախաքննութիւն առաջարկողն եւ յետո կը կոչեմ այս առաջարկը , Վասն զի կը տեսնեմ որ խնդիրն արդէն ժողովին բովէն անցեր եւ մի լիազօր Յանձնախումբի գրուել է , որ այդ կանոնագիր

բը կը մատուցանէ մեզ այժմ, Հետեւաբար հարկ չկայ, ստուգիւ, այս վիճակին մէջ այլ եւս նախաքննութեան ենթարկել խնդիրն, Սակայն կարելի է ժխտել որ պէտք է օրակարգն անցնել խնդիրն եւ այդ կանոնագիրն յօդուած առ յօդուած քննելէ՝ յետոյ՝ վաւերել:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Կը խնդրեմ որ բարեհաճի Դիւանն կարգաւ մեզ նորէն Սրբազան Պատրիարք Հօր նամակին այն մասն, որ անոնագիրն կը վերաբերի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ այն մասն «Վսեմ Ստեփան փաշային զլիաւոր գործողութեանց մին՝ միարանութեան նոր կանոնագիրն է, որն որ կը ներկայացնուի Ժողովոյդ:

Սոյն կանոնագիրը Յանձնաժողովս քննելով արժան համարեց իրեն տրուած լիազօր իշխանութեան համեմատ վաւերացնել:»

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ուրեմն ասկէ առաջ լիազօր իշխանութիւն մը տուեր էք Յանձնաժողովին, կրնա՞ք այժմ զայն ետ չառած՝ կանոնագիրը քննութեան ենթարկել: Ահա այս կէտը պէտք է պարզել ամէն բանէ առաջ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խնդիրը պարզուեցաւ, Ս. Պատրիարքը Հանձնարարք Ժողովին կանոնագիրը քննել եւ վաւերել, այլ գործադրութեան մասին անոր հրամանը կը խնդրէ: Ազգ. Ժողովն այս մասին լիազօր իշխանութիւն տուեր է Յանձնաժողովին, որ այժմ մասնաւոր կէտի մը համար միայն Ժողովիս կը դիմէ: Ես ալ ի սկզբան տարբեր տեսակէտով ըմբռներ էի խնդիրն եւ կարծելով թէ համարատուութիւն մ'է որ մեզ կը ներկայանայ, այս պատճառաւ Յանձնաժողով մ'առաջարկեցի քննութեան համար. սակայն կը տեսնեմ որ խնդիրն այն վիճակին մէջ է եւ Յանձնաժողովն Երուսաղիմայ կանոնագիրն, գործադրութեան հրամանը կը խնդրէ միայն, Ժողովն անշուշտ այդ կանոնագրին գործադ.

րութիւնը հրամայելու համար պէտք է որ զայն քննած է եւ վաւերած լինի, բայց քանի որ Յանձնաժողովին վրայ վստահութիւն ունի, կրնայ յանձնարարուիլ Ս. Պատրիարք Հօր որ նոյն կանոնագիրն աւժամանակեայ կերպով առ ի փորձ գործադրութեան դնէ, մինչեւ որ Ժողովը քննէ ու իմաստասիրէ զայն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս Ժողովն 1879 օգոստոս 24ի նիստին մէջ իմ առաջարկիս վերայ տուած է իւր որոշումն Երուսաղիմայ խնդրոյն նկատմամբ:

Ահաւասիկ նոյն նիստի ատենագրութեանէն կը կարդամ ձեզ իմ առաջարկիս եզրակացութիւնը:

«Այժմ քանի որ Սրբազան Պատրիարքը հոս բերած է խնդիրն, ըսել է ազգային Ժողովին հաղորդելու հարկ զգացեր է, մանաւանդ հանդանակութեան խնդիր կայ, ուստի յանձնարարենք Սրբազան Պատրիարք Հօր որ պէտք եղածն ի գործ դնէ, Վարչութեան հետ տնօրինելով վարժանն:

Ահաւասիկ նաեւ Ժողովին որոշումն: «Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քրէի կը դնէ խնդիրն եւ Ժողովն ըստ առաջարկի Փափաղեան էֆէնտիի՝ կը յանձնէ Սրբազան Պատրիարք Հօր որ Երուսաղիմայ պարտուց խնդրոյն նկատմամբ ինչ որ արժան է տնօրինել եւ գործադրէ Ազգ. վարչութեան հետ:»

Այս որոշումէն յայտնի կերեւի թէ Երեսփոխանական Ժողովը իւր իրաւաստութիւնը չը յանձնեց Յանձնաժողովին, այլ՝ ինչ որ վարչական շրջանին մէջ կրնար գործուիլ, միայն հրահանգ տուաւ զայն կատարելու: Յայտնի է որ երբ կանոնագրի մը վրայ է խնդիրը, միայն այս Ժողովն ունի հեղինակութիւն զայն վաւերելու, եւ իւր իշխանութիւնն չկրնար աւանդել ուրիշ մարմնոյ:

Հետեւաբար չեմ ընդունիր Ս. Պատրիարքին այն խօսքն, որով կըսէ թէ Յանձնաժողովն կանոնագիրը քննեց եւ վաւերեց: Կը կրկնեմ. վաւերացման իրաւունքն այս Ժողովին յատուկ է միայն: Սակայն ուրիշ խնդիր է թէ Յանձնաժողովն Երուսաղիմայ վանուց վիճակն անմիջական դարմանի կարօտ դատեր, եւ

կանոնագրին պատրաստութեան ստիպողութիւն ընծայելով ինք կանոնագիր մը ծրագրեր եւ դիւրեր է մեր աշխատութիւնն: Սակայն այդ կանոնագիրը վաւերելու իշխանութիւնն մերն է միշտ: Արդ՝ այս պարագային մէջ մեր պարտքն է կանոնագրին ամբողջ կարգաւ, եթէ բարեփոխում մը կայ, կատարել եւ այնպէս վաւերել: Ուստի պէտք է խնդիրն յառաջիկայ նիստի օրակարգն անցնել եւ կանոնագրէն մէն մի օրինակ ցուել կանխաւ երեսփոխանաց որ ուսումնասիրեն զայն եւ պատրաստուին իրենց կարծիքը յայտնելու:

Եւ ես այժմէն կը յայտարարեմ թէ կանոնագրին շնորհիւ Ստեփան փաշայի տաղանդին այնպիսի կերպով շինուած է, որ կարելի պիտի լինի մեզ զայն իւր ամբողջութեամբն ընդունիլ:

ԱՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱ. — Ես կընդունիմ այդ առաջարկը, բայց սա պայմանը կը կցեմ որ Յանձնաժողովին արարքը դատարկեւորելու եւ մերժելու երեւոյթ մը չունենայ, ինչ որ պիտի ընենք մենք: Դուք իշխանութիւն տրուեր էք անոր որ տնօրինէ Երուսաղիմայ պարտուց բարձման եւ տնտեսութեան բարեօքման համար ինչ որ արժան է: Եւ անա Յանձնաժողովը պարտքը բառնալու համար հանգանակութեան ձեռնարկեր եւ այդ կանոնը սահմաներ է որ անգամ մ'այ պարտք չընեն, որպէս զի վանուց ներքին կացութիւնը բարեօքի եւ այս վիճակին վերադարձն արգելու: Յանձնաժողովն ներկան եւ ապագան միանգամայն խորհր է, ներկային համար հանգանակութիւն եւ ապագային համար կանոն: Այդ կանոնն ապագան արդի վիճակէն ղերծ պահելու համար է: Մածեցէք 30,000 ոսկւոյ պարտք մը կայ մէջ անդ վճարելի, եւ ինչ հետեւանք կունենայ գործը, երբ Յանձնաժողովոյ արարքը խժըժանաց մատնուի:

Այդ կանոնագրէն, ինչպէս պահ մ'առաջ յայտարարեցի, 400 օրինակ յուղարկած եմ երեք ամիս առաջ, ուստի մէկ մէկ օրինակ կը հաղորդուի երեսփոխանաց եւ Ժողովն յառաջիկայ նիստին իւր կարծիքը կը յայտնէ եւ կը վաւերէ կամ կը մերժէ:

Ես ամեն ըննութիւն կատարեցի եւ Երուսաղիմայ վիճակը ըստ ամենայնի ուսումնասիրելէ յետոյ պատրաստեցի այս կանոնագիրն, մանաւանդ որ երեք տարի ի փորձ պիտի գործադրուի եւ յետոյ վերաքննուի, ուստի չեմ կարծեր որ Ժողովը դժուարութիւն կրէ զայն վաւերելու եւ մանրակրկիտ քննութեան պէտք ունենայ:

ԶԱՅՆԵՐ ԱՄԵՆՈՒՍ. — Գուէ, քուէ,

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին քրէի կը դնէ խնդիրն եւ Ժողովը միաձայն կՈՐՈՇԷ ըստ առաջարկի Փափաղեան էֆէնտիի օրակարգն անցնելով խնդիրն, կանոնագրէն մէն մի օրինակ անձնաբեր երեսփոխանի հաղորդել, եւ յառաջիկայ նիստին ի քննին առնուլ կանոնագիրն:

Յառաջիկայ նիստը կՈՐՈՇՈՒԻ Տ օրէն գումարել:

40.

Երեսփոխան Տօրթօր Մ. Արծրունիի մանց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր պաշտօնակիցներէն մին, տօքթէօր Միհրան Արծրունի, տարածամ կորսնցնելու դժբաղդութիւնն ունեցանք: Մահը շատ կանուխ այս պատուական անձն իւր ծաղիկ հասակին մէջ կորզեց մեր ձեռքէն եւ անդարմանելի կորուստ մը եւ անմխիթար վիշտ մը պատճառեց մեզ:

Պէրպլերեան էֆէնտին երկու խօսք պիտի նուիրէ մեր վաղամեռիկ պաշտօնակցին յիշատակին, կը հրաւիրեմ զինքն ի բեմ:

ԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Եղբարք երեսփոխանք:

Ներեցէք ինձ պահ մի ձեր ուշն դարձրնել մի դառն յիշատակի վերայ եւ տխուր՝

այլ նուիրական պարտականութեան մի կատարման հրաւիրել զձեզ :

Երբ մահն կը զարնէ մին այն ոչխարներէն որք կերթան խմբովին , մնացեալը կը շարունակեն իւրեանց ուղին անսարքեր :

Բայց մարդն չէ այնպէս . այդ հարուածն , նոյն իսկ երբ պատերազմի վտիճորդին մէջ կուգայ հնձել մեր նմանեաց կեանքն , անկնող զինուորին քով դեռ պատերազմող զինակիցն մի արտօսը , մի հառաչ , մի օրհներգ կը նուիրէ նմա :

Այժմ մեր մէջէն կիյնայ , աւա՛ղ , մին ի նորեկաց , մին յերիտասարդաց — մեր եզրաբակիցն , Տօքթէօր Արծրունի , ոչ եւս է :

Լացաւ զնա իւր տունն ոյր ճրագն էր , լացաւ զնա Խասգիւղ որ հպարտ էր զի ծընունդ տուած էր նմա . լացին զնա ժողովուրդը ամեն ազգէ եւ ամեն կրօնէ , զի Արծրունույ կեանքն այն կեանքերէն էր որք կարեւոր են ամենուն կենաց համար եւ զի իւր կորուստն , իրրեւ կորուստ ճարտար եւ քաջամուտ բժշկի , դուրս կելնէ ընտանեկան եւ ազգային սգոյ շրջանակէն եւ կը խոցէ ընդհանոր մարդկային ընկերութեան սիրտն , ոյր ցաւուց մարդասէր եւ զթափրտ դարմանիչն էր նա . լացին զնա Գիտութիւն եւ Արուեստ , զի հանճարեղըն Արծրունի , որ իւր արուեստին գործնական զբաղմանց մէջ՝ չզաղրէր երբէք տեսական եւ հետզհետէ խոր ուսումնասիրութիւններէ , եւ որ ա՛յնքան երիտասարդ , իւր ասպարէզին մէջ այժմէն մի հեղինակութիւն էր գրեթէ , կոչուած էր մեծ ծառայութիւններ մատուցանել զիտութեան որ արձանագրած էր արդէն երախտագիտութեամբ նորա մի գործն :

Բայց այս գերեզմանին , որ կը կլնէ մի այսքան պատուական գլուխ , մի այնքան հանրօգուտ եւ յուսածոյս կեանք , արցունք մի կը պարտի նաեւ Ազգային ժողովս :

Եղբարք Երեսփոխանք .

Մինչ ժողովս ազգային յառաջդիմութեան եւ վերածնութեան միջոցները կը խուզէ , մինչ ազգային շահուց պատնէշին վերայ կանգուն՝ կը մարտնչի եւ ձայն կուտայ ի հեռուստ ապագային , ո՛չ , ցաւալի եւս է այս մահ որ

կը խլէ մին մեր զինակիցներէն , մին նորերէն զորս դեռ չէ յոգնեցուցած կռիւն , մին արժանաւորագործներէն , մանաւանդ երբ կարի հազուադիւրս են ի մեզ լուսաշատ զլուխներ եւ սիրահարուստ սրտեր , որոց այնքան սէտք ունի Հայրենիք :

Տօքթէօր Արծրունի նաեւ մի ազգային կեանք էր սկսած եւ իւր օժանդակութիւնն բերած հանրական շահուց . Թագ խորհրդական եւ վարժարանի Հոգաբարձու էր ի Խասգիւղ , եւ նորա ներկայացուցիչն մեր մէջ . բազում ինչ կողատէր ազգն նորա տաղանդներէն եւ հայրենասիրութենէն , զգացում՝ զոր չէր մարած ի նմա արդի ժամանակաց Բարեւոյնին մէջ իւր երկարամանակեայ ուսումնասիրող գեղերումն եւ զոր չէր կորուսած իւր արուեստէն պահանջուած համաշխարհիկ յարաբերութեանցըն մէջ : Աւա՛ղ , այս կեանքն ալ , այն ինչ սկսեալ , կը բեկանի , ճառագայթաւէտ լոյս մի , բարոյական գորութեան մեծ տարր մի է որ կը պակսի ազգէն . բիւր յոյսեր կերթան Հայրենեաց այս չքնաղ զաւակին հետ ի գերեզման :

Եւ Արծրունի , իբրեւ Հայ , կը մեռնի վըշտահար եւ անմխիթար , զի հարստահար , սովեալ եւ կիսամեռ Հայրենեաց յուսահատութեան ճիչերն մինչեւ իւր մահուան անկողնոյն մէջ վշտացուցին զինքն եւ առաւել դառնացուցին անողոր ախտին ցաւերն ու իւր ճգնաժամի տագնապներն , զի իւր աչեր , գոցուելէ յառաջ չտեսան Ազգային թշուառութեանց վախճան եւ հորիզոնին վրայ նոր կեանքի արշալուսոյ մի ծագումն :

Սակայն երբ իւր հոգին գերեզմանին ստուերաց մէջէն նոր եւ գեղեցիկ կեանքի մ'արեւուն ելքն ողջունեց , ըսաւ անշուշտ իւրովի եւ սփոփեալ & եւ միշտ մութէն յետոյ լոյսն կը ծագի , տառապանքներէ յետոյ կուգան հանգիստն ու վարձք : »

Եւ եթէ ոչ եւս Արծրունի կը խօսի մեզ մարդկային բարբառով , իւր գերեզմանն , իւր խորհրդաւոր լեզուով , կազաղակէ մեզ & յուսացէ՛ք : »

Եղբարք , յօան կանգնիւք եւ մեր յեախն ու վշտազին մեծարանաց հարկն նուիրեմք

մեր յաւէտ մորմոքելի պաշտօնակցին՝ Տօքթէօր Միհրան Արծրունույ սիրելի եւ անմահ յիշատակին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի :

Ատեանը կը փակուի ժամ 10 ին :

Եւ Ատենապետ Էֆէնտիի հրաւիրանաց վրայ երեսփոխանք միաձամուռ յոսն կը կանգնին որոտոյոյդ , եւ ժողովն իւր վերջին մեծարանաց հարկը կը մատուցանէ վաղամեռիկ Տօքթէօր Արծրունի յիշատակին :

Ատենաղայիր Ատենապետ Մ. Գ. ՄԷԼԻՔԵԱՆ Ե. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ





ԳԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՅՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Խնդիր Դոնիակ նիստի (Միջադէպ)
2. Ատենական գործողութեանց վերաբերեալ գրեր :
3. Խնդիր վաւերացման Դոնիակ նիստերու Ատենագրութեանց :
4. Երեսօխտան Ք. Ղազարոսեան էֆ.ի առաջարկն հրաժարեալ եւ բացա-
կայ երեսօխտանաց նկատմամբ :
5. Երեսօխտան Ք. Ղազարոսեան էֆ.ի երկրորդ առաջարկն ներքին Կանո-
նագրի տպագրութեան մասին :
6. Երեսօխտան Ք. Ղազարոսեան էֆէնտի երրորդ առաջարկն Ազգ. Ժողո
վոյ ատենագրութեանց եւ ներքին բարեկարգութեան մասին :
7. Երեսօխտան Ս. Փափազեան էֆէնտի առաջարկը Կլիկիոյ վիճակաց
մասին :
8. Երեսօխտանաց ոմանց առաջարկը Թաղային մատակարարութեան մասին :
9. Խնդիր Երուսաղիմայ :
10. Երեսօխտան Socթէon Մ. Արծրունիի մահը :

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ուղերձ ի պատասխանի Նախագահական դրոյն . - Երազիր Յանձնա-
խըմբին : (Դոնիակ)

Գիւն 2. դրոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի Է. Ղալաբիոյ Ս. Լուսաւորիչ
եկեղեցւոյ բանկայը Է. Հայ գրավաճառաց քով